Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y

25/4121/ 11 փետրվարի 2012 շաբաթ

ISSN 1829-2224
12014
9 771829 222003

## Ա

## Տեսահոլովակի սցենար

Երեկ հայտնի դարձավ, որ դատախազությունը պատրաստվում է լայն հասարակայնությանը ներկայացնել տեսահոլովակներ, որոնք նվիրված կլինեն ընտրախախտումներին: Դա, անշուշտ, գովելի նախաձեռնություն է եւ մեծ դաստիարակիչ ու կանխարգելիչ նշանակություն կունենա: Ես չգիտեմ՝ արդյոք այդ տեսահոլովակների սցենարները պատրա՞ստ են: Եթե ոչ՝ ուզում եմ առաջարկել իմ տարբերակը:

...Երեւան, Հարավ-Արեւմտյան թաղամաս, ժամը 18.00: Տեղամասային հանձնաժողովի «անկուսակցական» նախագահը զանգահարում է իր կուսակցության շրջանային շտաբ եւ հայտնում, որ «գործերը լավ չեն»: Այնտեղից ասում են, որ նա սպասի հետագա հրահանգների: Տասը րոպե հետո տեղամաս է ներխուժում Բանգլադեշի Համոն՝ իր թիկնապահներով: Բարեբախտաբար, նրան հերթական անգամ ազատ են արձակել, եւ մերօրյա այդ հերոսին կարելի է խնդրել, որ նա նկարահանվի այդ տեսահոլովակում: Խոշոր պլանով ցուցադրվում է Համոյի առնական դեմքը: Գլխավոր հերոսը վճռական շարժումներով իր ծոցագրպանից հանում է քվեաթերթիկների մի տրցակ եւ լցնում է քվեատուփի մեջ: Ընդդիմադիր կուսակցություններից մեկի վստահված անձը՝ 20-25 տարեկան բարալիկ մի աղջիկ, փորձում է դրա դեմ ընդվզել: Համոն հանգիստ, բայց հաստատակամ եղանակով դիմում է տեղամասային հանձնաժողովի նախագահին՝ «ռադ արա էդ լրբին»: Հանձնաժողովի արհեստավարժ նախագահը վազում է փողոց, որտեղ տեղամասից 50 մետրի վրա (ինչպես եւ օրենքն է պահանջում) գտնվում է ոստիկանության մեքենան: Կադրում հայտնվում են ցմփոր լեյտենանտը եւ երկու սերժանտներ: Նրանք մտնում են տեղամաս եւ հարգալից բարեւում են Համոյին ու նրա թիկնապահներին: Լեյտենանտը դիմում է նիհար աղջկան. «Ոստիկանության մեր բաժանմունքը ահազանգ է ստացել, որ դուք խոչընդոտում եք ընտրական պրոցեսին: Խնդրում եմ մեզ հետ անցնել բաժին՝ գործի հանգամանքների մասին գրավոր բացատրություն տալու նպատակով»: Աղջիկը, բնականաբար, փորձում է առարկել, բայց այդ բոլոր փորձերը վճռականորեն կանխվում են լեյտենանտի կողմից՝ «դե-դե, լեզվիդ մի՛ տուր», որից հետո սերժանտները վերցնում են աղջկան թեւերի տակ ու դուրս բերում տեղամասից: Բայց աղջիկը դրանից առաջ հասցնում է զանգահարել լրագրողներին, եւ դրանցից մեկը գալիս է տեղամաս ու փորձում նկարահանել: Համոն կանխում է նաեւ այդ փորձը՝ «հեսա էս ապարատը կտամ գլխովդ» խրոխտ բացականչությամբ: Սակայն այդ սպառնալիքը չի իրականանում՝ պարզապես թիկնապահները խլում են լրագրողի ձեռքից նկարահանող սարքը, որից հետո իրենց շեֆի գլխավորությամբ դուրս են գալիս տեղամասից: Կես ժամ հետո գալիս է «Հայլուրի» նկարահանող խումբը եւ ռեպորտաժ է պատրաստում տեղամասից: «Ամեն ինչ ընթանում է հանգիստ, օրենքի սահմաններում»,- իր հարցազրույցում ասում է տեղամասային հանձնաժողովի նախագահը, իսկ «Հայլուրի» լրագրողն էլ իր կողմից ավելացնում է. «Որոշ կայքերում լրատվություն է տեղադրվել՝ իբր այդ տեղամասում տեղի են ունեցել խախտումներ, սակայն մենք դիմեցինք ԿԸՀ, որտեղից մեզ հայտնեցին, որ ահազանգը կեղծ էր»:

Եթե իմ սցենարի նախագիծը դուր է եկել դատախազությանը, ես կարող եմ մի քանի հատ էլ առաջարկել:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Առատ ձյան օգուտն ու վնասը

Վերջին օրերին հանրապետությունում անընդհատ տեղացող ձյունը ոգեւորել է գյուղնախարար Սերգո Կարապետյանին: Երեկ նա լրագրողներին ասել է, որ ձյունը առատություն ու երջանկություն է բերում: Սակայն գյուղնախարարի ոգեւորությունը երեկ հաստատ չեն կիսել «Զվարթնոց» օդանավակայանի ուղեւորները եւ «Չայնիի» ոլորաններում ձնաբքի պատճառով երեք ժամ ճանապարհին մնացած շուրջ 30 ավտոմեքենաների տերերը:





Լուսանկարները՝ ԳԱԳԻԿ ՇԱՄՇՅԱՆԻ





## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Իշխանության պոտենցիալ «ընտրազանգվածը»

«Հայաստանը մի երկիր է, որտեղ բնակչության 2/3-ը, պաշտոնական հարցումների արդյունքներով, բացահայտ ասում է երկրից հեռանալու ցանկության մասին: Իսկ թե որքա՞ն է թաքցնում իր այդ ցանկությունը...»,- երեկ «Առավոտի» հետ զրույցում նկատեց ՀՀՇ վարչության անդամ Հովհաննես Իգիթյանը՝ փաստելով, որ առաջիկա ընտրություններում ՀՀԿ-ն օգտագործելու է այս խավին, հատկապես սոցիալապես անապահով մասին, կաշառելով, վախեցնելով՝ «բերելով» ընտրությունների: «Բայց, ինչքան էլ եվրոպական չինովնիկները հայտարարեն, թող ՀՀԿ-ից որեւէ մեկը չկարծի, թե 2008-ի էջը փակված է: Այդ էջը փակված չէ, մեղավորներն ու կեղծարարները պատժված չեն»:

Կարդացեք էջ 3:

### Ընտրությունները կեղծելու միտումի մասին շատ բան է վկայում

«Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ, ՆԳ նախկին նախարար Սուրեն Աբրահամյանին հարցրինք՝ արդյոք «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագծի ընդունումը կարո՞ղ է որպես ցուցիչ հանդիսանալ առ այն, որ առաջիկա ընտրություններում էլ իշխանությունները մտադիր են կամ առնվազն չեն բացառում կեղծելու տարբերակը ու նախապատրաստվում են դրա դեմ հնարավոր զանգվածային ընդվզումը ճնշել նաեւ բանակի օգնությամբ: «Այդ կարգի ինդիկատորներն այնքա՛ն շատ են, որքան ուզեք»,- մեր հարցադրմանն ի պատասխան՝ ասաց Սուրեն Աբրահամյանը՝ թվարկելով նաեւ դեռ նախորդ ընտրությունների ժամանակ ընտրակեղծիքներ կատարած, այդ գործում առանցքային դերակատարում ունեցած անձանց, այդ թվում՝ պաշտոնյաներին, չպատժելու փաստերը:

Կարդացեք էջ 2:

### Բուրիդանի ավանակի եւ երկու խոտի դեզերի մասին

«Որպես կանոն, նման «ասեկոսեներ» տարածողները հայտնվում են բուրիդանյան ավանակի կարգավիճակում: Հին հույն փիլիսոփա Բուրիդանը ժամանակին ապացուցել է, որ երբ ավանակին կանգնեցնում ես երկու խոտի դեզերի՝ երկրաչափորեն կենտրոնում, չի կարողանում կողմնորոշվել՝ աջ գնա, թե ձախ: Իմ ներկաս «Օրինաց» օջախում է, ապագաս նույնպես լինելու է «Օրինաց» օջախում, ես զինվոր եմ, անկախ նրանից՝ կլինեմ պատգամավոր, թե չեմ լինի»,- խորհրդարանական ճեպազրույցի ժամանակ հայտարարեց ՕԵԿ խմբակցության պատգամավոր Հովհաննես Մարգարյանը եւ հավելեց, թե ինքը հնարավոր է՝ առաջադրվի նաեւ մեծամասնական ընտրակարգով:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ընտրություն

Վաղը Հրազդանում տեղի կունենան քաղաքապետի ընտրություններ:

### Եղանակ

Երեւան - 9 + 1, Շիրակ - 21 - 3, Կոտայք - 17 - 3, Գեղարքունիք - 17 - 3, Լոռի - 16 - 2, Տավուշ - 13 0, Արագածոտն լեռներ - 21 - 3, Արագածոտն նախալեռն. - 10 + 1, Արարատ - 10 + 1, Արմավիր - 10 + 1, Վայոց Ձոր լեռներ - 21 - 3, Վայոց Ձոր նախալեռն. - 9 + 2, Սյունիքի հովիտներ - 8 + 2, Սյունիքի նախալեռներ - 11 + 1, Արցախ - 7 + 2

## Հատուկ եկել էր գնացքով, որպեսզի մասնակցի



ԱԺ «Օրինաց երկիր» խմբակցության պատգամավոր Հովհաննես Մարգարյանը ներկայացել էր խորհրդարանական ճեպազրույցներին, որպեսզի հայտնի, թե հերյուրանք են լուրերը, որ ինքը նեղացել է ՕԵԿ-ից. «Ինը տարի է՝ պատգամավոր եմ, ինը տարվա մեջ չի եղել մի նիստ, որ բացակայեմ: Օրերս, երբ մի քիչ վատառողջ էի՝ բացակայեցի, Գյումրիում էի: Էսօր հատուկ եկել եմ գնացքով. եկա, որպեսզի մասնակցեմ, ոչ միայն հերքեմ, այլեւ երկու բառով ներկայացնեմ իրականությունը: ՕԵԿ-ը ինձ համար օջախ է, ես կուսակցության համար զինվոր եմ, Արթուր Բաղդասարյանը ոչ միայն մեր օջախի հիմնադիր-առաջնորդն է, այլ նաեւ իմ լավ ընկերը, բարեկամը եւ ինչու չէ՝ իմ եղբայրը: 2003-ին, ես հիշում եմ, երբ առանց մի քոռ կոպեկի ես կուսակցության ցուցակում 28-րդ համարն էի, Արթուր Բաղդասարյանը բարի կամք դրսեւորեց, 12 հոգի դիմում գրեցին, հրաժարվեցին մանդատից, եւ ես դարձա ԱԺ պատգամավոր: Յուրաքանչյուր հայ, առավել եւս գյումրեցի տղամարդ, նամուսի եւ թասիբի տեր, չի կարող ուրանալ մի անձնավորության, չի կարող ուրանալ մի կուսակցության, ով նման հնարավորություն ընձեռեց իրեն»:

Մ. ԵՍԱՅԱՆ

## ՌԴ նախագահի ընտրությունների դիտորդները հայտնի են

Ռուսաստանի նախագահի մարտի 4-ին անցկացվելիք ընտրություններին ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի դիտորդական խմբի կազմում ընդգրկված են նաեւ Հայաստանի Ազգային ժողովի ներկայացուցիչները՝ խորհրդարանի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովն ու պատգամավոր Գագիկ Մելիքյանը: Ազգային ժողովի հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ՝ նրանք դիտորդական առաքելություն կիրականացնեն համապատասխանաբար Սանկտ Պետերբուրգում եւ Մոսկվայում:

# Իշխանությունները պատրաստվում են ընտրակեղծիքների

## Ընդդիմադիրների կարծիքով՝ դրա մասին է խոսում ԱԺ-ում առաջին ընթերցմամբ ընդունված օրինագիծը

Այս շաբաթ ՀՀ խորհրդարանը 62 «կողմ», 0 «դեմ» եւ 7 «ձեռնպահ» ձայների հարաբերակցությամբ առաջին ընթերցմամբ ընդունեց «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագիծը, որով ՀՀ իշխանություններն արդեն օրենքի ուժով հնարավորություն կունենան բանակը ներգրավել ներքաղաքական պրոցեսներում: Մի բան, որը մինչ այժմ համարվում էր հակաօրինական ոչ միայն այն պատճառով, որ հակասում էր ՀՀ Սահմանադրությանն ու «Պաշտպանության մասին» օրենքին, ըստ որոնց՝ ՀՀ բանակը կոչված է բացառապես պաշտպանելու ՀՀ տարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնմխելիությունն ու անվտանգությունը, այլեւ օրենքով չէր կարգավորվել եւ չէր հստակեցվել բանակի եւ զինուժի գործառույթները արտակարգ դրության պայմաններում:

Ահավասիկ, ԱԺ-ում առաջին ընթերցմամբ ընդունված օրինագծի հոդված 9-ում՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները եւ ուժերը», ամրագրված է, որ «Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով կարող են օգտագործվել ոստիկանության, ազգային անվտանգության եւ պաշտպանության պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները», այդ թվում նաեւ հետեւյալ խնդիրների իրականացման նպատակով՝ «զինված անօրինական խմբավորումների գործունեության դադարեցում», «արտակարգ իրավիճակների կանխում, հնարավոր հետեւանքների նվազեցում եւ վերացում, մարդկանց կյանքի, առողջության երաշխավորում ու նյութական արժեքների փրկություն», իսկ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ նաեւ ապահովել «հավաքներ կամ հանրային միջոցառումներ իրականացնելու սահմանափակում կամ արգելում»:

Օրինագծում նշված է նաեւ, թե ՀՀ ԶՈՒ զինծառայողները ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք եւ մարտական տեխնիկա կիրառում են «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենքով եւ կարգով: Ակնհայտ է, որ հիշյալ դրույթները «կարված» են հենց ներքաղաքական զարգացումները, իշխանությունների գործողությունների դեմ հասարակության կամ քաղաքական ընդդիմության ընդվզումը ճնշելու համար,



առավել եւս, որ իշխանություններին, ինչպես մարտիմեկյան դեպքերը ցույց տվեցին, ոչինչ չի խանգարում խաղաղ ցուցարարներին որպես զինված մարդիկ ներկայացնելու:

Հանուն արդարության պետք է շեշտել, որ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագիծը հեղինակել է ՀՀ կառավարությունը դեռ 2007-ին, եւ այն ժամանակ էլ օրինագիծը պարբերաբար ընդգրկվել էր խորհրդարանի նստաշրջանի օրակարգում, հետո «քնել» էր, երկու-երեք անգամ լրամշակվել ու միայն այս տարվա փետրվարի 1-ին ներկայացվել ԱԺ քննարկման եւ ընդգրկվել քառօրյայի օրակարգում: Ընդ որում, անցած 5 տարիների ընթացքում էլ օրինագծում ընդգրկված է եղել բանակը եւ նրա միջոցներն արտակարգ իրավիճակում օգտագործելու վիճահարույց դրույթը: Թե ինչո՞ւ 5 տարի ԱԺ-ում «քնանցնելուց» հետո օրենքի նախագիծը որոշվեց հենց հիմա՝ ԱԺ ընտրություններից ընդամենը 2-3 ամիս առաջ, կրկին շրջանառության մեջ դնել եւ ընդունել, թերեւս, ենթադրելի է: Դրա մասին ԱԺ-ում խոսել են նաեւ «Ժառանգություն» խմբակցության պատգամավորները: Բանն այն է, որ 2008-ի «Մարտի 1»-ի դեպքերի ժամանակ բանակի ներգրավումը ընտրություններից հետո ընտրակեղծիքների դեմ ընդվզող ընդդիմությանն ու հասարակությանը զսպելու գործում դարձավ ոչ միայն մարտիմեկյան դեպքերի՝ իշխանությունների գործողությունների ամենախոցելի կողմը, այլեւ ներքաղաքական պրոցեսներում բանակի ներգրավման անթույլատրելիության մասին հայաստանյան ընդդիմության պնդումները հասան մինչեւ ՍԴ եւ նույնիսկ միջազգային ատյաններ՝ ԵԽԽՎ, որտեղ մի քանի օրենսդիրներ այդ առնչությամբ նույնիսկ համատեղ հայտարարությամբ հանդես եկան:

Արդյոք հիմա իշխանությունները, որոնք հայտարարում են ժողովրդավարությանն իրենց, իբր, հավատարմության եւ առաջիկա ընտրություններն արդար եւ ազատ անցկացնելու մասին, այս օրինագիծն ընտրություններից առաջ շրջանառության մեջ դնելով՝ չե՞ն մատնում իրենց՝ ընտրությունները վերստին կեղծելու եւ դրա դեմ հնարավոր զանգվածային ընդվզումը զսպելու մտադրությունները: Թե՞ սա ընդամենը 2008-ի մարտիմեկյան դեպքերին բանակի մասնակցությունը հետին թվով օրինականացնելու եւ այդ էջը շրջելու միջոց է: «Առավոտի» այս հարցադրմանն ի պատասխան՝ ՀՀ ՆԳ նախկին նախարար, իսկ այսօր ընդդիմադիր գործիչ, «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սուրեն Աբրահամյանն ասաց. «Երկուսը միասին, որովհետեւ նույնիսկ ոչ մասնագետի կողմից փոքրիկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր ընտրությունից հետո, երբ ժողովուրդը, ընդդիմադիր քաղաքական ուժերն ընդվզում են, իշխանություններն իրենց խոցելի տեղերն աշխատում են լրացնել համապատասխան օրենսդրությամբ: Սա է նրանց վարքագիծը՝ նախկին սխալներն ուղղել, բացթողումները լրացնել եւ հասարակության հնարավոր ընդվզումները զսպելու նոր գործիքներով պատրաստվել առաջագա խորհրդարանական ընտրություններին»:

Նախկին նախարարի ասելով՝ ՀՀ Սահմանադրությանն ու գործող օրենսդրությանն այս օրինագծի հակասելը խնդրի երկրորդ կողմն է. «Այս կարգի օրինագիծը «Մարտի 1» տեսած երկրում, իշխանությունների վայրագությունը սեփական կաշվի վրա զգացած ժողովրդի պարագայում լայն հասարակական քննարկման պետք է ներկայացվեր եւ ոչ թե այսպես հապճեպ եւ իրար փոխարեն կոճակներ սեղմելու միջոցով ընդունվեր, եթե, իհարկե, իշխանությունները նպատակ չունեին ի չարս օգտագործել այս օրենքը: Բայց, ցավոք, ինչպես միշտ, իրենք ապագան կանխորոշելու, ապագայում իրենց գործողություններում ձեռքերին ավելի ազատություն տալու համար են այսպիսի օրինագիծ քննարկում: Ինչեւէ, ես համոզված եմ, որ նման իրավական նիհիլիզմի պարագաներում չէր կարելի այս կարգի օրենքն այսպես հապճեպ քննարկման ներկայացնել եւ ընդունել»:

Արդյոք այս օրինագծի ընդունումը կարո՞ղ է որպես ցուցիչ հանդիսանալ առ այն, որ առաջիկա ընտրություններում էլ իշխանությունները մտադիր են կամ առնվազն չեն բացառում կեղծելու տարբերակը ու նախապատրաստվում են դրա դեմ հնարավոր զանգվածային ընդվզումը ճնշել նաեւ բանակի օգնությամբ: «Այդ կարգի ինդիկատորներն այնքա՜ն շատ են, որքան ուզեք»,- մեր հարցադրմանն ի պատասխան՝ ասաց Սուրեն Աբրահամյանը՝ թվարկելով նաեւ դեռ նախորդ ընտրությունների ժամանակ ընտրակեղծիքներ կատարած, այդ գործում առանցքային դերակատարում ունեցած անձանց, այդ թվում՝ պաշտոնյաներին, չպատժելու փաստերը:

Որպես հավելում՝ նկատենք, որ այս օրինագծին դեմ չեն արտահայտվել ո՛չ գլխադասային հանձնաժողովի նախագահ ՀՅԴ-ական Հրայր Կարապետյանը, ոչ էլ ՀՅԴ եւ «Ժառանգություն» խմբակցությունների պատգամավորները. նրանք կամ բացակայել են, կամ «ձեռնպահ» են քվեարկել:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# Պատգամավորները՝ մեկը մյուսի եւ ԱԺ-ի մասին

Ազգային ժողովի փոխնախագահ, ԲՀԿ փոխնախագահ Սամվել Բալասանյանը երեկ խորհրդարանական ճեպազրույցների ժամանակ շատ բնական համարեց խորհրդարանի անցած քառօրյայում նկատելի լարվածությունը եւ պատգամավորների բացակայությունները: Ըստ երկարամյա պատգամավորի՝ բոլոր ընտրություններից առաջ, երբ քաղաքական ուժերը եւ գործիչները նախապատրաստվում են գալիք խորհրդարանական ընտրություններին, պատկերը հենց այդպիսին է լինում, եւ ոչինչ արտառոց տեղի չի ունեցել. «Նախընտրական շրջան է, եւ պատգամավորները ձգտում են ավելի շատ տեղերում լինել եւ տեղերում իրենց աշխատանքը կազմակերպել, եւ դա է պատճառը, որ այսպիսի բացակայություններ կան: Բացի դրանից՝ հիմա համամասնական ցուցակներ են կազմում, բնականաբար, ամեն մի պատգամավոր, որը ցանկանում է նորից պատգամավոր դառնալ, նա նույնպես ունի իր անելիքը, օրինակ՝ փետրվարի 27-ին ավելի քիչ պատգամավոր է լինելու, դրանից հետո, մարտին՝ չգիտեմ, ոնց պետք է կարողանանք քառօրյան կազմակերպել, իսկ ապրիլին, ինձ թվում է, քառօրյա չի էլ կայանա, դա եղել է միշտ. այստեղ հին լրագրողներ կան, եւ իրենք էլ կհիշեն: Դրա համար պետք չի այլ բաներ փնտրել այստեղ»: Ըստ ԱԺ ԲՀԿ-ական փոխնախագահի՝ նախորդ նիստի ժամանակ ուրիշի փոխարեն քվեարկելու «սցենարը» պետք չէր սարքել. «Մի քանի անգամ զգուշացվեց, որ ուրիշի տեղ չքվեարկեն, բայց փաստորեն քվեարկեցին, իրոք, քվորում կար, դահլիճում կար 67 պատգամավոր, օրինակ՝ Այվազյան Վարդանի հետ կապված (Լարիսա Ալավերդյանը նկատել էր, որ Արեգ Ղուկասյանը քվեարկում է Այվազյանի փոխարեն- Մ. Ե.), Այվազյան Վարդանը միջանցքում էր, նա ավելի ուշ մոտեցավ, բայց նա 68-րդն էր, մենք երեկ հաշվեցինք 3-4 անգամ: Ուղղակի պետք չէր այդ սցենարը, որը սարքվեց, եւ անհարմար է, որ հիմա պատգամավորները չեն մասնակցում, եւ ինչ-որ տեղ որոշները փորձում են քվեարկել, ես քարտային սիստեմը ոնց որ իրեն նորից չի արդարացնում: Մենք դատապարտում ենք եւ ասում ենք, որ բոլորը պետք է գան եւ քվեարկեն իրենք իրենց փոխարեն, բայց երեկվա հետ կապված էդ ընդհանուր շոուն, էդ վեճն ու վիճաբանությունը անիմաստ էր, որպես վարող եմ ասում, որովհետեւ էդ պահին ես էի վարում նիստը»:

«Ժառանգություն» խմբակցության քարտուղար Լարիսա Ալավերդյանը իր հերթին առաջարկեց, որ լրագրողները կարեւոր հարցերը, այն է՝ ազատամարտիկների սոցիալական հարցերին վերաբերող հայտարարությունները չհամարեն PR ակցիա (երկու օր առաջ խորհրդարանական հայտարարությունների ժամին տիկին Ալավերդյանը հենց այդպիսի հարց էր հնչեցրել): Պատգամավորը հարկ համարեց պարզաբանել, թե ինչ է PR-ը. «PR-ը լավ բան է, դա նշանակում է Public Relation, եւ պատգամավորները պարտավոր են շփվել, ունենալ ավելի բաց հարաբերություններ հանրության հետ: Ես կխնդրեի՝ PR խոսքից այդ բացասական երանգը հանվի, նույն ձեւով պետք է հանվի «քաղաքականացումը» քաղաքական մարմին Ազգային ժողովում քաղաքական պաշտոնյաների կողմից, այն է՝ պատգամավորների, քաղաքական բնույթ կրող փաստաթղթերի, այսինքն՝ օրենքների, քննարկումների ժամանակ: Մենք միայն պետք է քաղաքականացնենք եւ ոչ թե առեւտրականացնենք: Ոչ բարեգործացնենք, ոչ էլ առնվազն կուսակցականացնենք: Պետք է բոլոր հարցերին տալ ճիշտ քաղաքական գնահատական»:

Անահիտ Բախշյանն էլ դիմելով լրագրողներին՝ ասաց. «Այս պահին հատկապես հենց Ազգային ժողովի PR պիտի անել, որպեսզի հասարակության մոտ մի փոքր բարձրացնենք վստահությունը եւ հարգանքը այս կարեւոր ինստիտուտի նկատմամբ, դա մեծապես ձեզանից է կախված՝ ցույց տալու համար, թե Ազգային ժողովում ինչպիսի եւ ինչ խմբերի հարցեր են բարձրացվում, կարեւոր չի՝ ում կողմից»:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

Ա aravot daily
ՇԱԲԱԹ 11.02.2012

# Հանրապետականը պատրաստվում է պատերազմի՞

ՀՀՇ վարչության անդամ Հովհաննես Իգիթյանը իր կարծիքը հայտնեց ընտրություններում բանակի օգտագործման, «Նախկին ու ներկա» ընկերների եւ «Ժառանգության» մասին:

Հայաստանյան քաղաքական դաշտի դեֆորմացիան, ըստ ՀՀՇ վարչության անդամ Հովհաննես Իգիթյանի, սկսվում է նրանից, որ Հանրապետական կուսակցությունն այն աստիճան է սերտաճել պետության կառույցների հետ, երբ արդեն դժվար է տարբերակել, թե որտեղ է սկսվում եւ որտեղ ավարտվում պետական չինովնիկի բուն պարտականությունները, որտեղ է ՀՀԿ-ն ներկայանում որպես կուսակցություն: Որպես ամենավառ օրինակ պարոն Իգիթյանը վկայակոչում է վարչապետ Տիգրան Սարգսյանի տարբեր հայտարարությունները, որոնցից դժվար է տարբերակել՝ Տիգրան Սարգսյանն այդ պահին որպես վարչապե՞տ է հանդես գալիս, թե՞ ՀՀԿ անդամ: Մեր զրուցակիցը համոզված է, որ այս խնդիրն էլ իր հերթին մեկ այլ խնդիր է առաջ բերում. «Երբ մի ընդդիմադիր կուսակցություն համարձակվում է մասնակցել ընտրություններին, այսպես ասած՝ մրցակից լինել Հանրապետական կուսակցությանը, պառլամենտում ներկայացված լինելու, առավել եւս մեծամասնություն ունենալու հավակնություններ ունենալ, ՀՀԿ-ն դա ընկալում է որպես մարտահրավեր կամ պատերազմի հայտարարում պետությանը: Ու պատերազմային տրամաբանության մեջ բոլոր տրամաբանական միջոցներով, պետական ատրիբուտներով սկսում են պայքարել: Ուժային, իրավական, իրավապահ բոլոր կառույցներով պայքար են սկսում, ու արդեն ստացվում է, որ ոչ թե ընտրական պայքար է կուսակցությունների միջեւ, այլ պետություն-ընդդիմություն պայքար է»: Հովհաննես Իգիթյանը հենց այս տրամաբանության մեջ է դիտարկում նախորդ օրը խորհրդարանում առաջին ընթերցմամբ ընդունված «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագիծը եւ փաստում է, որ եթե 2008 թվականի նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձություններում բանակն օգտագործվեց առանց օրինական հիմքերի, հիմա փորձ է արվում օրինական դաշտ ապահովել առաջիկա հնարավոր զարգացումներում. «Իմ կարծիքով՝ դա արվում է, որ եւ առաջիկա խորհրդարանական, եւ դրանց հետեւող նախագահական ընտրությունների ժամանակ, ընտրություններից հետո անհրաժեշտության դեպքում բանակի օգտագործումն օրինականացվի, եւ ընդդիմությունը չկարողանա օգտագործել այս հանգամանքը հատկապես միջազգային կառույցներում: Այստեղ, կարծում եմ, դեր ունի նաեւ աշխարհի իրավիճակը, երբ այս կամ այն դիկտատորի դեմ ժողովուրդը դուրս է գալիս փողոց՝ այդ դիկտատորները առանց բանակի չեն էլ փորձում ժողովրդին դիմակայել»:

Պարոն Իգիթյանը չկիսեց «Առավոտի» այն դիտարկումը, որ սույն օրինագծի ընդունմամբ իշխանությունը փորձում է առավել ընդգծել 2008 թվականի հետընտրական զարգացումներում Ռոբերտ Քոչարյանի հակաօրինական քայլերը: Նրա կարծիքով՝ փորձ է արվում ճիշտ հակառակն անել. «Ոչ թե ընդգծել, այլ հետին թվով օրինականացնել Քոչարյանի գործողությունները, մեղմացնել ընդդիմության կողմից մինչ այսօր հնչող մեղադրանքները՝ 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի ժամանակ բանակի օգտագործման մասով»: Այս «օրինականացումը», մեր զրուցակցի համոզմամբ, ցույց է տալիս, որ իշխանությունը կանխատեսում է մասսայական դժգոհություններ, որոնք առանց բանակի, միայն ներքին զորքերի միջամտությամբ դիմակայել չի լինի: Իգիթյանն ինքը համոզված է, որ ընդվզում լինելու է, եւ Սերժ Սարգսյանից մինչեւ ՀՀԿ շարքայինների կողմից արվող բոլոր հայտարարությունները, թե այս ընտրությունները լինելու են ամենափայլունը Հայաստանի պատմության մեջ, չեն մեղմելու ժողովրդի ըմբոստությունը: Ավելին, նա կարծում է, որ այդ հավաստիացումներն ուղղված են բացառապես օտարերկրյա դեսպաններին ու միջազգային կազմակերպություններին, ինչն ապացուցում է, որ իշխանությունները զգուշանում կամ վախենում են նրանց արձագանքներից: Իսկ, ընդհանրապես, ՀՀՇ վարչության անդամը կարծում է, որ իշխանությունը նախապատրաստվում է ընտրություններին նույն մեթոդոլոգիայով, ինչ որ 2008-ին էր. «Նույն մարդիկ, նույն կառուցվածքներով, համարյա օրենքի նույն կետերով պիտի կազմակերպեն եւ անցկացնեն այս ընտրությունները, միայն, կարծում եմ, խորամանկությունը մի քիչ կզարգացնեն՝ հաշվի առնելով միջազգային կազմակերպությունների զեկույցները, որոնցում մատնանշվում էին այս կամ այն խախտումները: Իշխանությունն այնպես կանի, որ խախտումներն ակնառու չլինեն: Բայց սա չի նշանակում, որ հասարակության մեծ մասը, ընդդիմադիր քաղաքական ուժերը չեն ընդդիմանա կեղծիքներին ու փողոց դուրս չեն գա»:

Մեր զրուցակիցը չի վիճարկում, որ հասարակությունը հիասթափված է ոչ միայն իշխանություններից, նրանց վարած քաղաքականությունից, այլ նաեւ հիմնական ընդդիմադիր ուժից՝ ՀԱԿ-ից. ի դեպ, կրկնակի ցավալի է, որ ՀԱԿ-ից հիասթափվում են նաեւ հենց ՀԱԿ-ի շրջանակներում ակտիվ գործունեություն ծավալած մարդիկ: «Այո, բայց պետք է հաշվի առնել, որ կա երկու ճամբար. ՀՀԿ-ն՝ ավտորիտար, մեկ անձի շուրջ հավաքված, եւ կան այլ ուժեր, որոնց մեջ կան կուսակցություններ, որոնք գաղափարական, ծրագրային թեզեր ունեն, անկախ նրանից՝ մենք նրանց սիրում ենք, թե ոչ: Պարտադիր չէ, որ իշխանությանը դեմ ամբողջ զանգվածը գնա ՀԱԿ-ին ընտրելու, չնայած ՀԱԿ-ը հայտարարում է, որ իր նպատակը ոչ թե պառլամենտում տեղեր ունենալն է կամ իշխանության խնդիր լուծելը, այլ այս մթնոլորտը, իրավիճակը փոխելը»,- ասաց Հովհաննես Իգիթյանը՝ հավելելով, որ եթե ՀԱԿ-ը կարողանա իր ծրագիրը ճիշտ օգտագործել, դրական արդյունքների կարելի է հասնել:

Վերջին շրջանում խոսակցություններ եղան, որ ՀՀՇ-ի կորիզի վրա ստեղծված «Ազատ դեմոկրատներ» եւ «Ժառանգություն» կուսակցությունները քննարկումներ են սկսել առաջիկա քաղաքական զարգացումներին համատեղ մասնակցության ձեւերի շուրջ: Հովհաննես Իգիթյանից հետաքրքրվեցինք՝ ինչպե՞ս է վերաբերվում այս հնարավոր համագործակցությանը, նկատի ունենալով, որ մի ուժի ներկայացուցիչներն իր նախկին ընկերներն են, իսկ մյուս ուժին՝ «Ժառանգությանը», մեղմ ասած, ՀԱԿ-ում այդքան էլ չեն սիրում: «Նախկին ընկերներ», եթե կոնկրետ իմ՝ պերսոնալ իմաստով եք ասում, ես իրենց «նախկին ընկեր» չեմ համարում. նրանք ինչպես եղել են իմ ընկեր, այնպես էլ մնացել են: Ամեն մեկը թող ինքը որոշի, թե իր համար ինչ է նշանակում՝ նախկին կամ ներկա»,- ասաց Հովհաննես Իգիթյանը՝ հավելելով, որ իր համար դժվար է ՀԱԿ-ի մասին խոսել, քանի որ ինքը ՀԱԿ-ի ներկայացուցիչ չէ, ՀՀՇ վարչության անդամ է, իսկ ՀԱԿ-ն ունի պաշտոնական ներկայացուցիչ, որը հավաքական, կոմպրոմիսային կարծիք է ներկայացնում: «Մենք ՀՀՇ-ում միշտ փորձում ենք քննարկել, եւ նույնիսկ ՀՀՇ-ում կան տարբեր կարծիքներ: Ես, որպես Հովհաննես Իգիթյան, «Ժառանգությանը» միշտ նորմալ եմ համարել եւ գնահատում եմ «Ժառանգության» առանձին անդամների հատկապես 2008-ի մարտի 1-ին արած գործը: Ես տեսել եմ նրանց թե ոստիկանական այլանդակությունների դեմն առնելու ժամանակ, թե ԵԽ-ում եւ այլ միջազգային կառույցներում ռեժիմի հանցագործությունները ներկայացնելու ժամանակ: Չունենալով մեծ քաղաքական փորձ՝ որոշ բաներ հաջողեցին, որոշ բաներ՝ ոչ, բայց կարեւորն այն է, որ նրանք փորձում էին պայքարել հանցագործությունների եւ այլանդակությունների դեմ: Ընդ որում, քանի որ Հայաստանի քաղաքական դաշտն ընդհանրապես այլասերված է, որոշ դեպքերում քաղաքական կուսակցությունը զբաղվում է իրավապաշտպան գործունեությամբ, ինչը դատապարտելի չէ: Ինձ համար ցանկացած մարդու ցանկացած տեսակի պայքարը ողջունելի է: Պայքարի ինչ-որ ձեւը նախընտրելի է անտարբեր կեցվածքից»: «Ազատ դեմոկրատներ»-«Ժառանգություն» հնարավոր համագործակցությանը Հովհաննես Իգիթյանը խանդով չի վերաբերվում, ավելին, կարծում է, որ նրանք մեկ ցուցակի մեջ չեն միավորվի, բայց նրանց պայքարը «խփում է նույն խնդրին՝ Հայաստանի ավտորիտար ռեժիմին»:

Ինչեւէ, մեր զրուցակիցը համոզված է, որ գործընթացը, գուցե փոքր-ինչ երկարատեւ, բայց գնում է իշխանափոխության, եւ երկու փաստարկ է բերում. եթե իրապես նորմալ ընտրություններ լինեն, հանրությանը հնարավորություն տրվի գնահատել մարդու ինտելեկտուալ եւ բարոյական կարողությունները՝ անվիճելի է, որ գործող իշխանությունը վերարտադրման շանս չունի: Եթե, այնուհանդերձ, գործի դրվեն իշխանական լծակները, կեղծիքների մեխանիզմները եւ այլն, միեւնույն է՝ հանրությունն ըմբոստանալու է այդ անօրինականությունների ու կեղծիքների համար. «Այսօր 2008 թվականը չէ: Այլ աշխարհաքաղաքական իրավիճակ է, տարածաշրջանի նկատմամբ դրսի ուշադրությունը մեծ է, Հայաստանին ներված որոշ կեղծիքների եթե նորերը գումարվեն, դա կլինի Հայաստանի վրա ճնշման նոր եւ մեծ ալիք, որին էլ Հայաստանը չի դիմանա: Բացի այդ, այլընտրանքային լրատվամիջոցների հնարավորություններն են մեծացել, սոցցանցերը մարդկանց ինֆորմացիա փոխանակելու ավելի մեծ հնարավորություններ են տալիս: Մենք դա տեսել ենք բնապահպանական շարժումների, ընդդեմ բանակում տեղի ունեցող միջադեպերի, անօրինական ձերբակալությունների եւ այլ օրինակներով: Իշխանությունն այս ամենը պետք է հաշվի առնի: Եվ եթե իշխանության մեջ դեռ կան մարդիկ, ում համար իշխանությունը գերնպատակ չէ, առաջնայինը Հայաստանն է, պետք է հասկացնեն, որ իրապես արդար ընտրությունները հենց իշխանությանն են ձեռնտու»,- ասաց Հովհաննես Իգիթյանը:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ



# «Բանակը պետք է սահմանները պաշտպանի»

«Ներքին զորքերն ու անվտանգության ուժերը լիովին բավարար են ներքին խնդիրները լուծելու համար: Արտակարգ դրության ժամանակ բանակը պետք է շատ ավելի զգոն լինի պետական սահմանների նկատմամբ»,- երեկ ասուլիսում հայտարարեց պաշտպանության նախկին փոխնախարար Վահան Շիրխանյանը՝ անդրադառնալով նախորդ օրը խորհրդարանում առաջին ընթերցմամբ ընդունված արտակարգ դրության մասին օրենքի նախագծին:

Լրագրողներից մեկի դիտարկմանը՝ արդյոք իշխանությունն այս օրենքով փորձում է նույն հա՞րցը լուծել, ինչ որ արվեց 2008 թվականի մարտի 1-ին, Վահան Շիրխանյանը պատասխանեց. «Մարտի 1-ը մի այլանդակ դրսեւորում էր, հանցագործ դրսեւորում էր եւ ժողովրդի, եւ քաղաքականության, աշխարհի հանդեպ: Դա չպետք է կրկնվի երբեք: Մարտի 1-ին Քոչարյանը ոչ մի իրավունք չուներ այդ գործողություններում զինված ուժերին ներգրավելու, դա հակասահմանադրական եւ հակաօրինական քայլ էր: Բայց այսօր, եթե նույնիսկ ենթադրենք, որ ընտրությունները կարող են ուղեկցվել անկայունություններով ու բռնություններով, ես քիչ հավանական եմ համարում»:



Պատասխանելով aravot.am-ի հարցին՝ իր համար հավաստի՞ են արդարադատության նախարարի բերած փաստարկները սույն օրենքի անհրաժեշտության մասով, Վահան Շիրխանյանն ասաց. «Ես կարծում եմ, որ այդ օրենքը պետք է ընդունվեր մեկ տարի առաջ, կես տարի առաջ եւ որեւէ կերպ չկապվեր առաջիկա ընտրությունների հետ: Բայց ներկայացվել է հիմա: Ես համարում եմ, որ երկիրը պետք է ունենա արտակարգ դրության մասին օրենք, որովհետեւ դա անհրաժեշտ գործիք է բոլոր երկրների համար, ոչ միայն Հայաստանի»: Շիրխանյանը հավանական է համարում եկող տարի կայանալիք նախագահական ընտրությունների ժամանակ 2008-ի դեպքերի կրկնությունը, բայց՝ «եթե 2008-ից մինչ այսօր որեւէ բան փոխված չլիներ»:

Բանախոսի կարծիքով՝ վերջին տարին ցույց տվեց, որ իշխանությունը որոշ քայլեր կատարում է արդյունաբերության, հատկապես գյուղատնտեսության ոլորտում հոգսերը թեթեւացնելու համար. «Եթե կատարվեն ավելի լուրջ ծրագրային աշխատանքներ, տեղի ունենա ճգնաժամը ծնող պատճառների վերլուծություն եւ ծրագրվի դրա հաղթահարումը, ես կարծում եմ, որ մինչեւ նախագահական ընտրություններ հասարակության լարվածությունը եւ դժգոհությունները զգալիորեն կմեղմանան: Դրա համար շատ քիչ բան է պետք՝ դադարել դեմոկրատացման մասին խոսելուց եւ խոսել սոցիալ-դեմոկրատացման մասին: Փոխել տնտեսական եւ կառավարման համակարգը»:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## Նոր Նորք Ծաղկաձորի գնով են տանում



Այս օրերին եղանակով պայմանավորված ֆորս-մաժորային իրավիճակը մի շարք տաքսու վարորդների բիզնես անելու հնարավորություն է ընձեռել: Օգտվելով առիթից, որ հասարակական տրանսպորտի պարկն այնքան էլ լավ վիճակում չէ, եւ միկրոավտոբուսների որոշ մասը գերադասում է երթուղագիծ դուրս չգալ, երեկոյան ժամերին տաքսի ծառայությունների գները կրկնապատկվում, եռապատկվում անգամ քառապատկվում են: Երեկ եւ նախօրեին, երեկոյան ժամը 20-ից հետո, մի շարք տաքսու վարորդներ Ավան, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Քանաքեռ համայնքներ քաղաքացիների ուղեվարձը հաշվում էին Ծաղկաձորի գներով: Նրանք իրենց ծառայության դիմաց 5 հազար դրամ էին պահանջում՝ մերժում ստանալու դեպքում պարզապես հրաժարվում էին սպասարկել, քանի որ գտնվում էին մարդիկ, որոնք տուն հասնելու համար պատրաստ էին ցանկացած գումար վճարել:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

# Գումարը սահմանափակ չէ, ոսպնյակների տեսականին է սահմանափակ

## ԲՀԿ-ի բարեգործական աչքի ոսպնյակները ոչ բոլոր հիվանդներին են հարմար

Ամեն անգամ նախընտրական շրջանում տարբեր կուսակցություններ ընտրողների սրտերն ու ձայները շահելու համար մի շարք բարեգործական ծրագրեր են իրականացնում: Անգամ շարժական կլինիկաներ են շրջում մարզերով՝ մարդկանց անվճար բուժօգնություն տրամադրելու նպատակով:

Այս տարի «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն առողջապահական անվճար ծառայություններ է մատուցում «Էրեբունի» հիվանդանոցում:

75-ամյա Անիկ Մեսչյանը, որը ԲՀԿ-ական է, որոշել էր օգտվել սեփական կուսակցության բարեգործությունից եւ աչքի վիրահատության համար դիմել էր կուսակցության պատասխանատուներին: Գրասենյակից տիկին Մեսչյանին ուղեգրել են «Էրեբունի» հիվանդանոց: Սակայն Անիկ Մեսչյանը հիվանդանոցում պարզել է, որ այդ անվճար օգնությունն այնքան էլ անվճար չէ: Ա. Մեսչյանի ներկայացմամբ՝ «Էրեբունի» բուժկենտրոնում նրան վստահեցրել են, որ աչքի ոսպնյակն ինքը պետք է գնի, բուժզննումն էլ՝ թե ձեռք բերված ոսպնյակը որքանով է համապատասխան նրա աչքին, կրկին պետք է սեփական գրպանի հաշվին անի, իսկ ոսպնյակի տեղադրումն արդեն «Էրեբունիում» կկատարեն: «Էլ ի՞նչ բարեգործություն, որ էդ ամենը պիտի իմ հաշվին անեմ: Աչքի ոսպնյակների արժեքը 50-100 հազար դրամ է, դրան էլ գումարած աչքի հատակի ստուգումը՝ մոտ 150 հազար դրամ պիտի ծախսեմ: 37 հազար դրամ ստացող թոշակառուն ո՞նց կարող է էդպիսի ծախսեր անել, երբ 2 որբ թոռներ ունեմ, մեկը նոր է եկել բանակից ու աշխատանք չի կարողանում գտնել, մյուսն էլ դեռ ծառայում է: Ես ի վիճակի չեմ 150 հազար դրամ հավաքել, որ կարողանամ աչքիս հարցը լուծել: Եթե պիտի մարդիկ վճարեն, ուրեմն թող անունը բարեգործություն չդնեն՝ մեզ էլ հուսախաբ չանեն».- «Առավոտի» հետ զրույցում պատմեց թոշակառու տիկինը:



Այս առնչությամբ զրուցեցինք «Էրեբունի» բժշկական կենտրոնի տնօրեն Արթուր Ռուստոմյանի հետ: Նրա պարզաբանմամբ՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ուղեգրերով կլինիկայում մոտ 500 աչքի վիրահատություն է կատարվել, որի համար նաեւ ոսպնյակներ են գնել: Իսկ եթե տիկնոջն ասել են, որ ինքը պետք է այլ տեղից գնի ոսպնյակը, ուրեմն կլինիկայի ոսպնյակները տիկնոջը հարմար չեն եղել. «Աչքի ոսպնյակները, մեքենաների պես, տարբեր տեսակի եւ տարբեր գների են լինում: Մենք ձեռք ենք բերել նորմալ, սովորական ոսպնյակներ: Լինում են հիվանդներ, որոնք, ճիշտ է, կուսակցության ուղեգրով են եկել, բայց մեր ոսպնյակները չեն հավանում՝ ինչ-ինչ պատճառներով: Բայց մերն էլ լավն են»: Մեր այն հարցին՝ գուցե բուժսպասարկումը սահմանափակ գումարի սահմաններում է, եւ դա է եղել պատճառը, որ տիկնոջը հորդորել են այլ կլինիկա գնալ բուժզննման համար, պարոն Ռուստոմյանը պատասխանեց. «Գնային ոչ մի սահմանափակում չկա: Այն բուժծառայությունները, որոնք մեր կլինիկայում կատարվում են, բոլորին, ովքեր կուսակցության ուղեգրով են գալիս, տրամադրվում են անվճար, ներառյալ վիրահատությունները: Եթե տիկնոջը այլ կլինիկա են ուղղորդել, ապա երեւի այն պատճառով, որ մեր բժշկուհին հիվանդ էր եւ մոտ մեկ ամիս աշխատանքի չէր գալիս: Թե չէ՝ ոչ մի խնդիր չկա աչքի բուժզննման հետ կապված: Ես առաջին անգամ եմ լսում, որ մեզ մոտ նման դեպք է եղել, բայց եթե այդ կինը կրկին դիմի մեզ, ապա մենք, իհարկե, անվճար բուժզննում կկատարենք, եւ եթե տեսնենք, որ մեր ոսպնյակներն իր աչքին հարմար չեն, ապա մի բան կանենք, այլ ոսպնյակ կպատվիրենք»:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության Արաբկիրի գրասենյակի պատասխանատու Պողոս Փլավչյանն էլ մեզ հետ զրույցում հավաստիացրեց, որ գնային սահմանափակում չկա, ով ինչ բուժօգնության կարիք ունի, անկախ գնից՝ տրամադրում են ուղեգիր. «Կարող է մարդուն պետք է սրտի ստենդավորում, այ, այդ դեպքում չենք կարող ուղեգիր տալ, քանի որ «Էրեբունիում» նման ծառայություն չկա»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Մենք սիրում ենք ձեզ: Ձեր արվեստում մենք միշտ գտնում ենք մեր շերտը, մեզ հասցեագրվածը եւ ուրախանում, որ մեր արվեստագետները չեն ստեղծագործում միայն մայրաքաղաքի ունկնդրի համար եւ չեն մոռանում հասարակ գյուղացուն: Վերջին շրջանում մենք ավելի մեծ հնարավորություններ ունենք ձեզ դիտելու, քանի որ մեզնից շատերն արդեն ունեն կայուն աշխատանք, նորմալ աշխատավարձ եւ կարող են իրենց թույլ տալ ձեր արվեստին առնչվել համացանցով: Հենց համացանցից էլ իմացանք, որ դուք մտահոգված եք Թեղուտի անտառների պահպանության խնդրով եւ մտադիր եք դեմ հանդես գալ Թեղուտում լեռնահանքային համալիրի կառուցման ծրագրին:

Մեզ համար շատ հուզիչ է ձեր մտահոգությունը Թեղուտի անտառներով: Համոզված ենք, որ դուք առաջնորդվում եք հայրենիքին նպաստ բերելու ցանկությամբ եւ ձեր խնդիրն առաջին հերթին համարում եք հայրենապահպանությունը: Համոզված ենք, որ Թեղուտի եւ Շնողի ծառերից առաջ եւ առավել ձեզ մտահոգում են Թեղուտի եւ Շնողի ազգաբնակչության ապագան, այդտեղ ապրող մարդկանց կյանքն ու կենցաղը:

Եթե երկու-երեք տարի առաջ ձեզ բախտ է վիճակվել լինել Թեղուտում կամ Շնողում, ապա դուք տեսել եք, թե ինչպես էին մարդիկ ապրում Թեղուտ եւ Շնող համայնքներում այդ ժամանակ: Եթե ոչ, ապա հայտնենք, որ այստեղ մարդիկ հայտնվել էին սոցիալական ծանրագույն պայմաններում, արտագաղթել էր բնակչության կեսից ավելին եւ աշխատունակ բնակչության գերակշիռ մասը: Նրանք, ովքեր մնացել էին, դժվարանում էին հոգալ իրենց եւ իրենց երեխաների նույնիսկ տարրական կենսական կարիքները: Մանրամասնենք, որ ավելի հասկանալի լինի. մարդիկ միջոցներ չունեին իրենց երեխաների համար շոր ու կոշիկ առնելու կամ գոնե կարիքի դեպքում երեխային բժշկի տանելու: Հետեւաբար, եթե հաշվի առնենք Թեղուտի վիճակագրական տվյալները, տարիներ առաջ գյուղում ծնվում էր տարեկան 1-5 երեխա, իսկ վերջին երկու տարում ծնվել է 32 երեխա:

# Բաց նամակ՝ արվեստագետներին

Սիրելի Միքայել Պողոսյան, Վարդան Պետրոսյան, Մկո (Մկրտիչ Արզումանյան), Շուշան Պետրոսյան, Գոռ Գրիգորյան (Գլումով), այս սրտաբուխ բաց նամակով դիմում ենք ձեզ եւ ի դեմս ձեզ՝ բոլոր հայ արվեստագետներին:



Այսօր Թեղուտի լեռնահանքային համալիրը դեռ շինարարության փուլում է, սակայն մեր համայնքներում արդեն այլ իրադրություն է: Ընկերությունում արդեն աշխատում է ավելի քան 850 մարդ, իսկ շահագործման փուլում կաշխատի 1400-ից ավելի: Մարդիկ արդեն հնարավորություն ունեն ապրելու շատ թե քիչ մարդավայել պայմաններում:

Հավատացե՛ք, Թեղուտի անտառը առավել թանկ է հենց մեզ համար: Մենք իրոք պետք է պահպանենք եւ պահպանում ենք անտառը՝ իր յուրօրինակ կենդանական աշխարհով: Ի տարբերություն այդ խնդրով միայն վերջերս հետաքրքրվող տարբեր անձանց՝ գյուղի բնակիչները ի սկզբանե շահագրգիռ վերաբերմունք են ցուցաբերել ծրագրի վերաբերյալ կազմակերպված բազմաթիվ քննարկումներին, որոնց ընթացքում ոչ միայն ստացել ենք մեզ հուզող խնդիրների վերաբերյալ պատշաճ պարզաբանումներ, այլ նաեւ ներկայացրել ենք մեր պահանջները բնապահպանական հարցերում: Նաեւ այդ քննարկումների շնորհիվ է, որ «Վալլեքս» ընկերությունը հանքավայրի շահագործման համար հատվող անտառի յուրաքանչյուր հեկտարի դիմաց անտառապատում եւ տարիներ շարունակ խնամում է երկու հեկտար: Մենք լավատեղյակ ենք ծրագրի բնապահպանական խնդիրներին եւ համոզված ենք, որ բնապահպանական վնասը մեղմվելու է եւ փոխհատուցվելու այնպես, ինչպես աշխարհի ամենազարգացած երկրներում: Մենք այսօր ունենք եզակի հնարավորություն՝ բնության հանդեպ պատասխանատու վերաբերմունքով հասնել տնտեսական զարգացման:

Աշխատատեղերի բացակայության պատճառով մեր տարածաշրջանն այսօր կորցրել է մարդկային ներուժի զգալի մասը եւ շատ է թուլացել: Մի՛ մոռացեք, որ սա սահմանամերձ շրջան է, որի ամրությունից կախված է յուրաքանչյուր հայաստանցու անվտանգությունը: Հանքավայրի շահագործման ծրագրով իրավիճակը սկսել է արմատականորեն փոխվել: Լոռու մարզի այս հատվածը սկսել է բառացիորեն վերակենդանանալ: Լեռնահանքային համալիրում աշխատանքը այսօր պահում է եւ տեսանելի հեռանկարում կպահի թեղուտցուն՝ Թեղուտում, շնողցուն՝ Շնողում, լոռեցուն՝ Լոռիում: Թեղուտցիների մեծամասնության համար կտրականապես մերժելի է ծրագրի իրականացման համար որեւէ խոչընդոտ:

Սրանով ձեզ խնդրում ենք, մի՛ տրվեք սադրանքների, մի՛ հավատացեք ամեն բարի գործ սեւացնողների: Եթե ձեզ իրապես հետաքրքրում է, թե ինչ է կատարվում իրականում, ապա հրավիրում ենք Թեղուտ եւ Շնող: Եկե՛ք, ձեր աչքերով տեսեք կառուցվող կոմբինատն էլ, հատվող անտառն էլ, տնկվող անտառն էլ: Համոզված ենք, ձեր արվեստը գնահատողներին ձեր ասելիքը շատ ավելի համոզիչ կլինի սեփական աչքերով ամեն ինչ տեսնելուց հետո:

Այս բաց նամակով դիմում ենք նաեւ Հայաստանի որոշ «բնապահպանների». գուցե հեշտ է մայրաքաղաքում նստած՝ դատողություններ անել բնապահպանության, եզակի բուսատեսակների ու կենդանատեսակների մասին: Որպես Թեղուտի եւ Շնողի բնակիչներ՝ մենք հարցնում ենք՝ իսկ որտե՞ղ էիք դուք, երբ վատթարագույն սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով Թեղուտում եւ Շնողում առավել վտանգված էր բանական էակը՝ մարդը: «Բնապահպանական» մտահոգությունների քողի ներքո մի՛ պղտորեք մարդկանց մտքերը, անհայտ ծագման ֆինանսական ծախսեր արդարացնելու համար մի՛ արատավորեք մեր արվեստագետների բարի անունը:

Թեղուտ եւ Շնող համայնքների բնակիչներ

Առավոտ aravot daily
ՇԱԲԱԹ 11.02.2012

# Պարսիկներին Հրազդանի կիրճ էին իջեցրել ու հափշտակել

## Հայ մեղադրյալները խնդրում են սահմանել պատիժը պայմանականորեն չկիրառելու փորձաշրջան

Երեւանի Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում անցյալ տարվա դեկտեմբերի 27-ին ավարտվեց թիվ 10130211 քրեական գործի դատաքննությունը:

Այդ քրեական գործով մեղադրանք էր առաջադրվել Բաբկեն Հասրաթյանի, Գուրգեն եւ Գեւորգ Պետրոսյանների, Արթուր Հարությունյանի, Տիգրան Սորտինյանի եւ Հայարփի Վանեսյանի նկատմամբ:

Նրանք մեղադրվում էին ՀՀ քրոջի 176 հոդվածի 2- րդ մասի 1-ին, 2-րդ եւ 4 -րդ կետերով, իսկ Հ. Վանեսյանը 38-176 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2 եւ 4 կետերով:

2011թ. սեպտեմբերի 12-ին, ժ. 00. 05-ի սահմաններում, Երեւանի Հրազդան գետի կիրճում նշյալ անձինք Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ Սայիդ Ռոսթամիին եւ Բեհնամ Աղայիին ծեծի էին ենթարկել, վնասվածքներ պատճառելով՝ նրանցից բացահայտ հափշտակել էին 40 000 դրամի «Սոնի Էրիքսոնը», 222 000 դրամի ոսկյա շղթան, «Սվիսթար» ժամացույցը, 148 000 դրամի արժողության ոսկյա թեւնոցը, պարսկական «Ճանապարհորդային չեկը», որը ոստիկանության տվյալների համաձայն՝ կազմել էր 186 000 դրամ: Ըստ գործի նյութերի, Հայարփին եւ Անդրանիկն էին իրանցիներին խաբեությամբ կիրճ իջեցրել: Դատաքննությունն անցավ արագացված ընթացակարգով: Դա նշանակում է, որ նշյալ անձինք իրենց լիովին մեղավոր էին ճանաչել եւ զղջացել էին կատարվածի համար:

Բաբկեն Հասրաթյանը, որը նախկինում դատված չի եղել, ծառայել է ազգային բանակում: Նա ուներ կրտսեր սերժանտի կոչում, ՊՆ 41507 զորամասի հրամանատարի ստորագրությամբ նախաքննության մարմնին էր ներկայացրել ծառայողական դրական բնութագիր: Զորացրվելուց հետո նա շարունակել է ուսումը բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ երրորդ կուրսի ուսանող է: Բաբկենի ընտանիքը բազմանդամ է, հայրը՝ Ա. Հասրաթյանը, 2-րդ, իսկ տատիկը 3-րդ կարգի հաշմանդամներ են, մայրը չի աշխատում, իսկ եղբայրն էլ ժամկետային զինծառայող է: Բաբկեն Հասրաթյանը, բացի Հայարփիից, մյուս մեղադրյալների հետ դիմել է թերթին, որպեսզի արդարադատական մարմինները կարդալով իրենց կողմից «պահի տակ» եղածի մասին, հաշվի առնեն իրենց ընտանիքների սոցիալապես անապահով վիճակը՝ վճռի կատարման ժամանակ:



Դատարանը ամբաստանյալի նկատմամբ վերջնական պատիժ էր սահմանել նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի չափով: Նրա նկատմամբ ընտրվել է ստորագրությունը չհեռանալու մասին, չնայած դատախազ Արայիկ Մանուկյանը պահանջել էր մինչեւ 3 տարվա ազատազրկում:

Ի դեպ, բոլոր մեղադրյալների նկատմամբ ընտրվել է նույն պատիժը, իսկ Գեւորգը դատարանի դահլիճից անհապաղ բաց է թողնվել:

19-ամյա Գեւորգ Պետրոսյանն էլ զորակոչվել էր զինծառայության, սակայն ՌԿՀ -ի կողմից ճանաչվել է ոչ պիտանի զինծառայության համար՝ «անձի էմոցիոնալ անկայության խանգարում /փսիխոպաթիա/ ախտորոշմամբ: Այն հաստատվել է նաեւ դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ: Արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոցում» վիրահատվել էր Գուրգեն Պետրոսյանը:

Գեւորգ եւ Գուրգեն Պետրոսյանների ընտանիքը նույնպես բազմանդամ է, չնայած մայրը մանկուց հաշմանդամ է ճանաչված, սակայն 6 հոգուց բաղկացած ընտանիքի ամբողջ հոգսը ընկած է նրա վրա, քանի որ հայրն էլ է վատառողջ ու վերջերս է վիրահատվել եւ անաշխատունակ է:

Մեղադրյալների անապահով լինելու հանգամանքը փաստվեց նաեւ նրանով, որ նրանք դատարանում հանրային պաշտպան են ունեցել՝ անվճարունակ լինելու պատճառով:

Մեղադրյալները օգնել են նախաքննությանը՝ հանցագործության բացահայտման գործում, ինչը ՀՀ քրոջի 62 հոդվածի համաձայն՝ պատասխանատվությունը եւ պատիժը մեղմացնող հանգամանքներ են:

Մեղադրյալներն ասում են, որ ի սկզբանե ընդունել են մեղքը, իսկ տուժողներն էլ վնասի հատուցում եւ պահանջ չեն ներկայացրել: Ըստ նրանց, տուժողների կողմից դատարան ներկայացված կողոպտված իրերի արժեքները ուռճացված են եղել: Մասնավորապես, ոստիկանության հաղորդման մեջ ժամացույցների գինը գրված էր 800.000 դրամ, մինչդեռ, ապրանքագիտական փորձաքննության եզրակացությամբ՝ ժամացույցի արժեքը 1.500 դրամ է հաստատվել, մնացած իրերն էլ չեն հայտնաբերվել: Ըստ Բաբկենի, իրենց մոտ ոչ ոսկե շղթաներ են եղել, ոչ էլ այդքան գումար, եւ դա է եղել պատճառը, որ տուժողները հենց նախաքննության ժամանակ չեն պնդել վնասի հատուցման մասին, հետեւաբար պահանջ չի ներկայացվել նրանց կողմից: Դատախազը բողոք է ուղարկել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան: «Բոլորս էլ առաջին անգամ ենք նման իրավիճակում հայտնվել, չենք ապրել ցոփ ու շվայտ կյանքով: Մենք հասարակ եւ պարկեշտ կենցաղով ապրող ընտանիքներից ենք: Մենք խնդրում ենք, որպեսզի մեր նկատմամբ սահմանվի նվազագույն տուգանք կամ կիրառվի ՀՀ քրոջի 70 հոդվածը եւ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառվի», ասում էին մեր լրատվամիջոցին դիմած մեղադրյալները:

Նշենք, որ նրանք 4 ամիս եղել են ազատազրկված: Ընդսմին, Բաբկեն Հասրաթյանի եւ Տիգրան Սորտինյանի հարազատները պատրաստվել են վճարելու, իսկ Գուրգեն եւ Գեւորգ Պետրոսյանները, Արթուր Հարությունյանը եւ Հայարփի Վանեսյանը հիմա էլ խնդրում են դատարանից՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու փորձաշրջան նշանակելու դատական ակտ կայացնել:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Պաշտոնյան շորստանի աթոռ չէ

## Սննդի անվտանգության հարցը դեռ օրակարգում է

Զանգվածային լրատվամիջոցներով հաճախակի հայտնվող պետական տարաբնույթ ստուգող, վերահսկող ու պատժող բազմամարդ հանձնաժողովները, իրենց խայտաբղետ գործունեությամբ, չեն նպաստում անցանկալի երեւույթների բացառմանը, ստվերում են իրենց իսկ կատարած աշխատանքը, ստեղծում անվստահության մթնոլորտ:

Տպավորությունն այնպիսին է, թե այդ հանձնաժողովականները Մուշեղ Գալշոյանի նկարագրած «հնադարյան շելյան հատիչներ» փնտրող, օրերով ճամփեզրին պարապ ժամանակ անցկացնող երիտասարդներն են, որոնք արդեն հասունացած տարիքում նույնաբովանդակ գործելակերպով ու արդյունավետությամբ իրականացնում են իրենց նոր, անիմաստ առաքելությունը: Այդ ամենին կարելի էր ըմբռնումով կամ անուշադրությամբ վերաբերվել, եթե նրանց գործունեության որոշ դրվագներ անմիջապես չառնչվեն հասարակության ամենախոցելի ու անապահով զանգվածներին՝ թոշակառուներին:

Առաջին՝ առանձնապես ինչեղ ու անհեթեթ շարունակություն ունեցող բացահայտումը իրականացվել է ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից, երբ հայտարարվեց բազմահազար «վերակենդանացած» թոշակառուներին վճարած թոշակների, յուրացրած միջոցների մասին: Ավելի քան 1 տարի է անցել, իսկ հիմնական մեղավորները պատժվել են այնքանով, որ զրկվել են իրենց վերակենդանացրած թոշակառուների անունով կրկնակի թաղման ծախսեր դուրս գրելու ու չլրացնելու հնարավորությունից: Մինչդեռ այդպիսի ահռելի չափերի չարաշահումների բացահայտմանը պետք է որ հետեւեին հիմնավոր օրենսդրական, իրավական միջոցառումները, ինչու չէ, ֆինանսական միջոցների վերաբաշխումը: Նախ, եթե տասը տարվա վաղեմությունը չբոլորած, օրենսդրորեն ձեւավորված, համակարգը կարող է հնարավորություններ ստեղծել այդպիսի չարաշահումների, ապա այդ օրենքը կատարյալ չէ, եւ այն ենթակա է հիմնարար խմբագրման, երկրորդը՝ ցանկացած չարաշահում (հանցանք) պետք է ստանա իր համարժեք գնահատականը (պատիժը), մինչդեռ այսօր հայտնի է երկու տասնյակ ենթադրյալ մեղսակիցների հանրապետությունից չբացակայելու պարտավորությունների ու նրանց ղեկավարի արտասահմաններում բուժում ստանալու հրապարակումների մասին (եթե թոշակառուների հաշվին, թե չէ, որ պաշտոնյան հնարավորություն ունի իր աշխատավարձով բուժում ստանալ արտերկրում), եւ վերջինը՝ գործող համակարգը (կենսաթոշակային հիմնադրամը) թույլ է տվել, ինչպես ասում են, միլիարդավոր դրամների աննկատ սրացում, ուրեմն այդ համակարգում գոյացել են բավականին ազատ ֆինանսական միջոցները (21 միլիարդ դրամը համարում են վերականգնած), այդ միջոցները մինչ բացահայտումը ու բացահայտումից հետո կարելի էր ուղղել նվաստացուցիչ կենսաթոշակների դրույքաչափերը փոքր-ինչ բարձրացնելու կամ նրանց ինդեքսավորմանը, հարաճուն գնաճի հետեւանքները մեղմելու համար: Յուրացրած 21 միլիարդ դրամի վերականգնման փաստը հուշում է, որ թոշակառուները նախկինում զրկված են եղել նվազագույն այդ գումարի չափով հավելավճարումից, որը 540 000 թոշակառուներից ամեն մեկի համար կկազմեր ամսական 3050 դրամ:

Արժե անդրադառնալ նման մեկ այլ գերհզոր ատյանի՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊ) կողմից 13 10-21 11 2011թ. իրականացրած բացահայտմանը, որը ստվերեց նախորդ բոլոր այդօրինակ միջոցառումները: Այդ բացահայտումով մեր օգտագործած սննդամթերքի մասին գիտելիքները հարստացվեցին տարիներով մեր օրուտեստի անբաժանելի բաղադրիչ, նորահայտ «բուսասերուցքային սփրեդ»-ով, որը վաճառվել ու սպառողներին է մատուցվել որպես բարձրորակ կարագ, ՏՄՊՊ տվյալներով, 1 կգ համար ստանալով 1000 դրամի կարգի գերշահույթ: Եվ այդ «անմեղ թյուրիմացության» համար սպառողների առողջության համար բավականին վտանգավոր սննդամթերքը ներկրող ու իրացնող հազարավոր տնտեսավարող սուբյեկտներից 10-ը տուգանվեցին մի ամբողջ 30 միլիոն դրամով՝ ընդամենը 30 տոննայից ստացած գերշահույթի չափով (ամեն մեկին 3 միլիոն դրամ տուգանք), որը միայն 2011թ 9 ամիսների ընթացքում հանրապետություն ներկրած «սփրեդ» ապրանքանյութերից խաբեությամբ ստացած հնարավոր գերշահույթի 0 5%-ից պակաս է, թե քանի տարի է իրականացվել խաբեությունը, սննդաբերության որ ոլորտներում ու սննդամթերքի ինչ տեսականու մեջ է օգտագործվել ու օգտագործվում այդ կասկածելի բաղադրության շահութաբեր մթերքը, եւ, վերջապես, որքան են կազմել գերշահույթի չափերը, պետք է հասու լիներ հանձնաժողովին եւ տուգանքն էլ պետք է համարժեք լինի: Սովորաբար, այդ կարգի տուգանքները շրջանառության 1% ի կարգի էին լինում (2011թ. առաջին 9 ամիսների ընթացքում ներկրվել է 6719 տ բուսական հիմքերով յուղեր ու միայն 3551 տ կաթնասերուցքային յուղ): Արժեր ճշգրտել ու հանրությանը հասու դարձնել այդ նորահայտ մթերքի օգտակարությունը, գուցե արժե հիմնավորապես հրաժարվել կարագ օգտագործելու թանկ հաճույքից ու խնայողաբար բարգավաճել «սփրեդ» օգտագործելով, վերջապես սարիներով օգտագործելը վնասել, թե անխուսափելի է դարձրել մեր առողջությունը: Համաձայն հրապարակումների, կենդանական ու բուսական ճարպերից կոմբինացված այդ մթերքը պարունակում է տրանսիզոմերներ (յուրատեսակ թթուներ): Փորձագետները պնդում են, որ այդ թթուները սոսնձում են բջիջները ու առաջացնում են տրոմբներ, բարձրացնում են խոլեստերինի քանակը արյան մեջ: Դա բերում է շաքարային դիաբետի առաջացման, օնկոլոգիական ուռուցքների, անկարություն (իմպոտենցիա) ու անպտղություն տղամարդկանց մոտ, նյութափոխանակության խաթարման, սրտի իշեմիկ հիվանդության, ինֆարկտի, կաթնագեղձի ու ենթաստամոքսային գեղձի ուռուցքի եւ այլն: Եվ այսքան վտանգավոր սննդամթերքը տարիներով ներկրվել ու իրացվել է հարկատուների հաշվին գործող «Սննդի անվտանգության պետական ծառայության» ու նույնատիպ այլ ծառայությունների աչալուրջ հսկողության պայմաններում:

Եթե այն ուղղվելու է սպառողների առողջությանը հասցրած վնասների հետեւանքների վերացմանը, ապա այդ վնասներից ամենախոցելի 540 000 թոշակառուներից միայն 2415-ի խաթարված առողջությանը մասնակի ապաքինմանը կարող է նպաստել, եթե ուղղված է խաբեությունը բացառելուն, ապա ընդամենը 10 հոգու հավաստիացումները («Հորս արեւ, էլ չեմ անի») հաստատ բավարար երաշխիք չեն: Կարծում եմ, ինչպես ցանկացած հանցանք (զանցանք, խաբեություն) պետք է ունենա համարժեք պատիժը, այնպես էլ պետական ցանկացած ատյանին տրված մեծ իրավասությունները պետք է հակակշռված լինեն համարժեք պարտավորություններով ու պատասխանատվությամբ: Ու այդ բոլորի իրականացման պարագայում կարելի է ակնկալել վստահելի որոշումներ, որոնք կնպաստեն ոչ միայն բացահայտված չարաշահումների բացառմանը, այլ նաեւ մեր հավատին առ կառավարող համակարգն առ այն, որ մեր օգտագործած դեղորայքը թույն չէ, կարագը թունավոր «սփրեդ» չէ եւ, վերջապես, պաշտոնյան շորստանի աթոռ չէ, իսկ ՀՀ քաղաքացին էլ լիարժեք պաշտպանված է:

ՌՈԼԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Թոշակառուների հայկական միավորում
հ/կ հիմնադիր անդամ

## ԱՐՄԵՆ ՇԵԿՈՅԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՎԵՊ

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ



Սկիզբը 187, 192, 197, 202, 207, 212, 217, 222, 227, 232, 237, 242, 247, 5, 10, 15, 20-ում:

Գլուխ տասնութերորդ

## ՀԱՄԵՍՏ ԼՅՈՎԻԿ

Սովորաբար Լիպոն ոչ միայն ժամանակակից հայ գրականության անդաստանում անձամբ Զավախյանի արձակի առաջնայնությունից է խոսում, այլեւ՝ Զավախյանի արձակի հետ կապված Նոբելյան մրցանակի անխուսափելիությունից ու հրատապությունից, եւ չնայած Զավախյանին դեռեւս չի հաջողվել ճշտել թե՝ Լիպոյի ասածների որ մասն է լուրջ եւ որը՝ կատակ, այդուհանդերձ, ինքն ամեն իրիկուն Լիպոյենցից առժամանակ «Կետիկնոց» տրվելով՝ շատ չանցած վերստին վերադառնում է Լիպոյենց, եւ իր էդ մշտական վերադարձը տեղի է ունենում էն պահին, երբ «Կետիկնոցում» Շանթն ու մի քանիսն, այնուամենայնիվ, հանդգնում են իմ անունն իր անվան կողքին դնել, եւ Զավախյանը հատկապես էդ դեպքերում է անհապաղ վերադառնում Լիպոյենց, եւ Զավախյանը նորից, դարձյալ, կրկին, վերստին ու մշտապես Լիպոյենց է վերադառնում ոչ միայն էն պատճառով, որպեսզի իր ու Նոբելյանի առնչության վերաբերյալ անձամբ Լիպոյից որոշ բաներ լսի, այլեւ էն պատճառով, որ Օրթախենց պես Լիպոյենք էլ բացակա ընկերներից բամբասելու սովորություն ունեն, եւ Զավախյանը հասկանալով ու գիտակցելով, որ էդ առումով ինքը չի կարող բացառություն լինել, մշտապես ու հապշտապ վերադառնում է Լիպոյի շրջապատ, որովհետեւ մանավանդ Զավախյանի բացակայության պայմաններում նույն Լիպոն ի վիճակի է նույն Զավախյանի եւ նույն Նոբելյանի թեման ամբողջովին կատակի վերածել, եւ քանի որ Զավախյանը մշտապես հասկանում է ու գիտի, որ իր բացակայության պայմաններում իր Նոբելյանի հարցը հիմնականում կատակի է վերածվում, մշտապես ու վերստին վերադառնում է Լիպոյի շրջապատ, որովհետեւ իր հայտնվելու պահից սկսած՝ Լիպոն վերստին լրջացնում է իր Նոբելյանի թեման, եւ էս ասածներս վերաբերում են ամառային ու տաք եղանակներին, որովհետեւ ցրտերն ընկնելու հետ ոչ միայն «Կետիկնոցն» է փակվում, այլեւ Լիպոյենք են ձմեռային արձակուրդ գնում, եւ, փաստորեն, ձմռան սեզոնին Զավախյանը տեւականորեն հայտնվում է Օրթախի շրջապատի հետ դեմառդեմ ու մենմենակ, եւ Լիպոյին վերադառնալով ասեմ, որ, ճիշտ է, ինքը Զավախյանի բացակայության պայմաններում հիմնականում հումորով է Զավախյանի Նոբելյանի թեման արծարծում, Զավախյանի ներկայությամբ միանգամայն լուրջ շեշտադրությամբ է էդ նույն բաներն ասում ու կրկնում. այսինքն, Զավախյանի Նոբելյանի թեմայի կոնտեքստում ոչ ոք Լիպոյին չի կարող մեղադրել ու սխալ հանել, որովհետեւ Լիպոն Զավախյանի ներկայությամբ ու Զավախյանի բացակայությամբ, փաստորեն, Զավախյանի Նոբելյանի մասին միանգամայն նույն բաներն է ասում՝ ընդամենը ասելու ձեւն ու հնչերանգը փոխելով, եւ էս հարցում որեւէ մեկը չի էլ փորձում նրան բռնացնել՝ ոչ միայն էն պատճառով, որ Լիպոն, փաստորեն, Զավախյանի ներկայությամբ ու բացակայությամբ նույնն է ասում, այլեւ էն պատճառով, որ Զավախյանի Նոբելյանի թեման բոլորին ու մանավանդ Արիկին լիաթոք ու լիասիրտ ուրախություն է պատճառում, եւ, իհարկե, ամենից ավելի անձամբ իրեն՝ արձակագիր ու արծաթավաճառ Լեւոն Զավախյանին է ուրախություն պատճառում, եւ ամենից քիչ հենց Լեւոն Զավախյանն է ձգտում իր Նոբելյանի հետ կապված Լիպոյի վերաբերմունքը քննարկման դնել, որովհետեւ բոլորից լավ է հասկանում, որ Լիպոյի վերաբերմունքի քննարկումն իրոք ծիծաղելի կլինի, եւ չնայած էդ բանն ինքը մյուսներից լավ է հասկանում, այնուամենայնիվ, մի անգամ իմ ներկայությամբ ու կողմնակիների բացակայությամբ Լիպոյին հարցրեց՝ «ադա, էդ Նոբելյանիս կապակցությամբ լուրջ ե՞ս խոսում, թե՞ հանաք ես անում», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու փոթկացնելով ասաց՝ «միանգամայն լուրջ եմ խոսում, պարոն Զավախյան», եւ Զավախյանը մի քիչ մտածելուց հետո հարցրեց՝ «որ լուրջ ես խոսում, բա ինչի՞ ես ծիծաղում», եւ Լիպոն մի քիչ մտածելուց հետո փոթկացնելով ասաց՝ «ոչ թե ծիծաղում եմ, այլ ուրախանում եմ, պարոն Զավախյան», եւ Զավախյանը մի քիչ մտածելուց հետո հարցրեց՝ «ծիծաղելն ու ուրախանալը նույն բանը չե՞ն», եւ Լիպոն ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «միանգամայն տարբեր բաներ են, պարոն Զավախյան» եւ մի քիչ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «գրող մարդ ես. էդ տարբերությունն ինձնից լավ պիտի իմանաս» եւ մի քիչ էլ մտածեց ու ծիծաղելով ավելացրեց՝ «բեզ պիծի մինուտ Նոբելյան մրցանակի լաուրեատ մարդ ես. ծիծաղելու ու ուրախանալու տարբերությունն ինձանից լավ պիտի իմանաս», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու Լիպոյին հարցրեց՝ «բայց ինչի՞ վրա ես ուրախանում», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «քո էդ Նոբելյանի վրա» եւ մի քիչ էլ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «էդ օրն ամբողջ հայ ազգն ա ուրախանալու», եւ Զավախյանը ժպտալով հարցրեց՝ «ո՞ր օրը», եւ Լիպոն փոթկացնելով պատասխանեց ու ասաց՝ «շնողնեցի Զավախյան Լյովիկի Նոբելյան մրցանակի օրը», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով Լիպոյին ասաց՝ «հասկանում եմ, որ հանաք ես անում, բայց հեչ էլ չեմ նեղանում» եւ մի քիչ էլ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «որովհետեւ էդ հանաքնիդ ինձի լափ էլ ձեռնտու են», եւ Լիպոն ժպտալով հարցրեց՝ «ինչո՞վ են ձեռնտու», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «էդ արդեն իմ իմանալու հարցն ա» եւ մի քիչ էլ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «ընենց որ՝ կարաս էդ մուտիլովկեքդ շարունակես», եւ Լիպոն ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «ի՞նչ մուտիլովկեք», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «դու ինձանի լավ գիտես», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «չեմ հասկանում», եւ Զավախյանը հարցրեց՝ «ի՞նչը չես հասկանում», եւ Լիպոն ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «էդ մուտիլովկա բառի իմաստը» եւ մի քիչ մտածեց ու ժպտալով ինձ հարցրեց՝ «մուտիլովկա ի՞նչ ա նշանակում», եւ Զավախյանը Լիպոյին հարցրեց՝ «էդ ինչի՞ ես Արմոյին հարցնում», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «ինքը երեւանցի ա. մտածում եմ՝ կարող ա էդ բառի իմաստն իմանա», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու Լիպոյին ասաց՝ «ինքը երեւանցի ա, բայց մուտիլովկի մասնագետը դու ես», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով Զավախյանին ասաց՝ «ինքը երեւանցի ա, բայց Նոբելյան մրցանակի թեկնածուն դու ես», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով Լիպոյին ասաց՝ «ես երեւանցի չեմ, բայց գիտեմ, որ մուտիլովկեն խառնակչությունն ա», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու Զավախյանին հարցրեց՝ «կարող ա՞ նեղանում ես», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու քմծիծաղով Լիպոյին հարցրեց՝ «որ քու անունը Նոբելի հետ կապեն, կարող ա՞ նեղանաս», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «իմ անունը չեն կարա Նոբելի հետ կապեն», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու քմծիծաղով հարցրեց՝ «խի էդքան անարժան ե՞ս», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «իմ գծով Նոբելյան մրցանակ չկա», եւ Զավախյանը ժպտալով հարցրեց՝ «խի քոնը ո՞ր գիծն ա», եւ Լիպոն ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «փիլիսոփայությունը», եւ Զավախյանը քմծիծաղով ասաց՝ «ես էլ գիտեի թե՝ քոնը մաթեմատիկան ա», եւ Լիպոն քմծիծաղով Զավախյանին ասաց՝ «քո համար փիլիսոփայությունն ու մաթեմատիկան նույն բանն են», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «դպրոցում համ մաթեմատիկայից չէի կարում խնդիր լուծեմ, համ՝ ֆիզիկայից», եւ ես խոսակցությանը խառնվելով ասացի՝ «ես քիմիայի խնդիրներն էլ չէի կարում լուծեմ», եւ Լիպոն փոթկացնելով ասաց՝ «դրա համար էլ գրող եք դառել» եւ մի քիչ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «դրա համար էլ Նոբելյան մրցանակի հույսեր եք փայփայում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «դու ավելի շատ ես հույսեր փայփայում, քան՝ մենք», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով Զավախյանին ասաց՝ «ես ավելի շատ ձե՛ր համար եմ հույսեր փայփայում» եւ մի քիչ էլ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «ավելի ճիշտ՝ քո», եւ Զավախյանը ժպտալով ասաց՝ «ճիշտ կանես՝ քո՛ համար փայփայես», եւ Լիպոն ժպտալով ասաց՝ «եթե մաթեմատիկոս ըլնեի, էլի Նոբելյանի հույսեր չէի ունենա», եւ Զավախյանը քամահրանքով Լիպոյին ասաց՝ «քեզանի լավ գիտեմ», եւ Լիպոն ժպտալով հարցրեց՝ «ի՞նչ գիտես», եւ Զավախյանը փոթկացնելով պատասխանեց ու ասաց՝ «որ վախտին Նոբելի կնգա հետ քիչ քաշ գային, հիմի իրանց էլ էդ մրցանակից կհասներ», եւ Լիպոն ժպտալով Զավախյանին ասաց՝ «փաստորեն, Նոբելի մասին ահագին բան գիտես», եւ Զավախյանն արհամարհանքով նայեց Լիպոյին ու ասաց՝ «ահագին բան գիտեմ, բայց ահագին քիչ եմ խոսում» եւ մի քիչ մտածեց ու քամահրանքով ավելացրեց՝ «ի տարբերություն ոմանց», եւ Լիպոն մի քիչ մտածեց եւ մեղավոր ժպտալով Զավախյանին ասաց՝ «որ նեղանում ես, էլ Նոբելիդ մասին չեմ խոսա», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «Աստված ոչ անի», եւ Լիպոն հարցրեց՝ «այսինքն», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «էդ Նոբե-

Ա aravot daily
ՇԱԲԱԹ 11.02.2012

լի թեմային էնքան ենք վարժվել, որ արդեն առանց էդ թեմայի չենք կարա», եւ Լիպոն խորամանկ ժպտալով հարցրեց՝ «ո՞վ չի կարա», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «ես էլ, դու էլ», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու խորամանկ ժպտալով ասաց՝ «ես լավ էլ կարամ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «քեզ ա թվում», եւ Լիպոն զարմացած հարցրեց՝ «ի՞նչն ա ինձ թվում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով Լիպոյին ասաց՝ «քեզ դիր ա գալի, որ մարդիկ կողքերանքդ պտիտ են գալի», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու լրջանալով Զավախյանին ասաց՝ «էդ միտքդ մի անգամ էլ ես ասել», եւ Զավախյանը ժպտալով ասաց՝ «էլի եմ ասում» եւ մի քիչ մտածեց ու ժպտալով հարցրեց՝ «կարող ա՞ չես սիրում», եւ Լիպոն կմկմալով հարցրեց՝ «ի՞նչ չեմ սիրում», եւ Զավախյանը ժպտալով հարցրեց՝ «կարող ա՞ չես սիրում, որ մարդիկ շուրջբոլորդ պտիտ գան», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «ասենք թե սիրում եմ. էդ ի՞նչ կապ ունի», եւ Զավախյանը ժպտալով ասաց՝ «լավ ա գոնե խոստովանում ես», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «խոսքի օրինակ եմ ասում» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց՝ «էս թեմայով էլի ենք խոսացել», եւ Զավախյանը ժպտալով ասաց՝ «հիշում եմ» եւ մի քիչ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «բայց էն անգամվա մեր խոսակցությանն Արմոն ներկա չէր», եւ Լիպոն զարմացած հարցրեց՝ «Արմենի ներկայությունն ի՞նչ կապ ունի», եւ Զավախյանը ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «շատ մեծ կապ ունի» եւ մի քիչ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «ուզում եմ ասեմ՝ դու երրորդ անձնավորության ներկայությամբ լրիվ ուրիշ տոնով ես հետս խոսում», եւ Լիպոն զարմացած հարցրեց՝ «ի՞նչ տոնով եմ խոսում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «հեգնական», եւ Լիպոն փռթկացնելով հարցրեց՝ «հեգնական տոնը ո՞րն ա», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «դու ինձանից լավ գիտես» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց՝ «երրորդ անձնավորության բացակայության ժամանակ հետս լրիվ լուրջ տոնով ես խոսում», եւ Լիպոն ժպտալով հարցրեց՝ «լուրջ տոնը ո՞րն ա», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «լուրջ տոնն էն տոնն ա, որով երրորդ անձնավորության բացակայության ժամանակ ես հետս խոսում», եւ ես խոսակցությանը միջամտելով ասացի՝ «փաստորեն, իմ ներկայությունը ձեզ խանգարում ա» եւ ծիծաղելով ավելացրի՝ «եթե պետք ա՝ ես կարամ գնամ», եւ Զավախյանը ծիծաղելով ինձ ասաց՝ «հենց գնաս, Լիպոն կսկսի հետս լուրջ խոսալ», եւ Լիպոն ծիծաղելով Զավախյանին ասաց՝ «ես ո՞նց կարամ քո հետ լուրջ խոսամ, այ շաշ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «որ քեզ պետք ա ըլնում, հետս լավ էլ լուրջ-լուրջ ես խոսում», եւ Լիպոն ժպտալով հարցրեց՝ «ինչի՞ մասին եմ հետդ լուրջ-լուրջ խոսում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «թեկուզ Նոբելի», եւ Լիպոն խորամանկ ժպտալով ասաց՝ «ես Նոբելի մասին միշտ էլ լուրջ եմ խոսում», եւ Զավախյանը ժպտալով ասաց՝ «խոսքս անձամբ իմ փայ Նոբելի մասին ա», եւ Լիպոն փռթկացնելով ասաց՝ «անձամբ քո փայ Նոբելի մասին էլ եմ միշտ լուրջ խոսում», եւ Զավախյանը խորամանկ ժպտալով Լիպոյին հարցրեց՝ «բա ինչի՞ ես փռթկացնում», եւ ես փռթկացնելով Զավախյանին ասացի՝ «երրորդ անձնավորության ներկայությամբ փռթկացնելը բռնում ա», եւ Զավախյանը ժպտալով ինձ հարցրեց՝ «բա դո՞ւ ինչի ես փռթկացնում, աղա», եւ ես փռթկացնելով ասացի՝ «երրորդ անձնավորության ներկայությամբ իմ փռթկացնելն էլ ա բռնում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ինձ ասաց՝ «դու էդ թավուր չես», եւ ես ժպտալով հարցրի՝ «ի՞նչ թավուր չեմ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ինձ ասաց՝ «դու երրորդ անձնավորության ներկայությամբ էլ ես հետս նույն ձեւով խոսում, բացակայությամբ էլ», եւ Լիպոն ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «դրանով ի՞նչ ես ուզում ասես», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «ուզում եմ ասեմ՝ Արմոն ազնիվ ա», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու խորամանկ ժպտալով Զավախյանին ասաց՝ «ուրիշ վախտ ուրիշ բան ես ասում», եւ Զավախյանը կարմրելով հարցրեց՝ «Արմոյի մասի՞ն», եւ Լիպոն ժպտալով Զավախյանին ասաց՝ «ես խաբարբզիկ չեմ, որ Արմենի մասին ասածներդ Արմենի մոտ ասեմ», եւ Զավախյանը Լիպոյին հարցրեց՝ «բա ասածդ ի՞նչ ա», եւ Լիպոն ժպտալով Զավախյանին ասաց՝ «մի վախտ ասում էիր, որ աշխարհում ազնիվ մարդ գոյություն չունի», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու Լիպոյին ասաց՝ «մի քիչ լավ չես հիշում. ես տըհենց չեմ ասել», եւ Լիպոն ժպտալով հարցրեց՝ «բա ո՞նց ես ասել», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «ես ոչ թե ասել եմ՝ աշխարհում ազնիվ մարդ գոյություն չունի, այլ ասել եմ՝ աշխարհում բացարձակ ազնիվ մարդ գոյություն չունի», եւ Լիպոն խորամանկ ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «այսինքն, Արմենը բացարձակ ազնիվ չի՞», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «ես իմ սաղ ասածներին տեր եմ» եւ մի քիչ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «Արմոն ոչ թե բացարձակ ազնիվ ա, այլ ամենագետ Լիպարիտի համեմատ ա ազնիվ», եւ Լիպոն փռթկացնելով Զավախյանին հարցրեց՝ «ամենագետ Լիպարիտն ո՞վ ա», եւ Զավախյանը ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «ով ասողը», եւ Լիպոն ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «կարող ա՞ դու էլ ես ամենագետ Լիպարիտից ազնիվ», եւ Զավախյանն ինքնագոհ ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «աշտոժ» եւ մի քիչ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «կարաս չկասկածես», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու խորամանկ ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «կարող ա՞ Արմենից էլ ես ազնիվ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու փռթկացնելով ասաց՝ «ազնվության հարցում Արմոյի հետ համարյա հավասար ենք», եւ Լիպոն ժպտալով հարցրեց՝ «բա ո՞ր հարցերում եք անհավասար», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու լրջանալով ասաց՝ «որոշ հարցերում ինքն ա ինձանից առավել, որոշ հարցերում՝ ես», եւ Լիպոն ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «Արմենն էլ ա՞ Նոբելյանի արժանի», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «աշտոժ» եւ մի քիչ էլ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «բայց՝ պոեզիայի գծով», եւ Լիպոն ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «արձակի գծով մենակ դու ես, չէ՞», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ինքնագոհ ժպտալով ասաց՝ «մինն էլ կար, բայց հիմի չկա», եւ Լիպոն ժպրտալով հարցրեց՝ «էդ բախտավորն ո՞վ ա», եւ Զավախյանն ինքնագոհ ժպտալով Լիպոյին ասաց՝ «դու ինձանից լավ գիտես», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «Հրանտը՞», եւ Զավախյանն ինքնագոհ ժպտալով Լիպոյին ասաց՝ «որ ասում եմ ինձանից լավ գիտես՝ չես հավատում», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «շա՜տ համեստ տղա ես, Զավախյան Լյովիկ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «համեստությունից էսքան վախտ ոչ մեկը չի մեռել» եւ մի քիչ էլ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «համ էլ համեստությունը զարդարում ա մարդուն» եւ մի քիչ էլ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «պարոն ամենագետ Լիպարիտ» եւ մի քիչ էլ մտածեց ու փռթկացնելով ինձ հարցրեց՝ «լավ անուն կպցրի, չէ՞», եւ ես ժպտալով ասացի՝ «վատ անուն չի», եւ Լիպոն ժպտալով Զավախյանին ասաց՝ «ես քեզ ավելի լավ անուն կարամ կպցնեմ», եւ Զավախյանը ժպտալով ասաց՝ «կպցրու՝ տենամ ի՞նչ անուն ես կպցնում», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու փռթկացնելով ասաց՝ «Համեստ Լյովիկ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով Լիպոյին հարցրեց՝ «համեստությունս ե՞րբ ես տեհել», եւ Լիպոն ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «մի քիչ առաջ տեհա» եւ մի քիչ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «մի քիչ առաջ համեստաբար համաձայնվեցիր, որ Արմենն էլ ա Նոբելյան մրցանակի արժանի», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «բայց՝ պոեզիայի գծով», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով Զավախյանին ասաց՝ «արձակի գծով Արմենը կարա Գինեսի գիրք էլ մտնի», եւ Զավախյանը զարմացած հարցրեց՝ «ո՞նց», եւ Լիպոն ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «հեշտուիանգիստ» եւ մի քիչ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «իրա էս վեպն աշխարհի ամենաերկար վեպն ա», եւ Զավախյանը տհաճությամբ նայեց Լիպոյին ու հարցրեց՝ «անձամբ ե՞ս ստուգել», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու խորամանկ ժպտալով ասաց՝ «իմացողներն են ասում», եւ Զավախյանը հարցրեց՝ «ո՞վ ա ասում», եւ Լիպոն փռթկացնելով պատասխանեց ու ասաց՝ «ստուգողները», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ինձ հարցրեց՝ «ճիշտ ե՞ն ասում, աղա», եւ ես ժպտալով ասացի՝ «որ ասում են, երեւի մի բան գիտեն», եւ Լիպոն ժպտալով ինձ հարցրեց՝ «արդեն տասնմեկերորդ հատորն ես սկսել, չէ՞», եւ ես ժպտալով ասացի՝ «տասնմեկերորդը վերջացրել եմ. տասներկուերորդն եմ սկսել», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով Զավախյանին ասաց՝ «որ դրանից մեծ վեպ գրած ըլնեին, հաստատ կիմանայինք», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու քամահրանքով Լիպոյին ասաց՝ «մեկը որ քեզ լսի, կմտածի՝ աշխարհի սաղ վեպերը կարդացել ես», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «ամենակարեւորները կարդացել եմ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու փռթկացնելով ասաց՝ «դրա համար էլ ամենագետ եմ ասում» եւ մի քիչ էլ մտածեց ու ժպտալով ավելացրեց՝ «իզուր քեզ մի տանջի, ամենագետ ախպեր» եւ մի քիչ էլ մտածեց ու լրջանալով ասաց՝ «շատերն են ուզեցել ինձ ու Արմոյին կռվացնեն, բայց չի ստացվել», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու փռթկացնելով ասաց՝ «տարին տասներկու ամիս իրար հետ խռով եք», եւ Զավախյանը հարցրեց՝ «ո՞վ ա ում հետ խռով», եւ Լիպոն ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «Արմենն ու դու», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «մեր խռով ըլնելը կողմնակի մարդկերանց չի վերաբերվում», եւ Լիպոն զարմացած հարցրեց՝ «ես ե՞մ կողմնակի», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «կողմնակին կողմնակի չես, բայց էդ չի նշանակում, որ կարաս ինձ ու Արմոյին կռվացնելու փորձեր անես», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «դուք իրար հետ միշտ ըսենց բարիշ էղեք, թող չուզողը ես ըլնեմ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու Լիպոյին ասաց՝ «լավ ա գոնե ընդունում ես, որ դաննի մամենտ խռով չենք», եւ Լիպոն ասաց՝ «որ խռով չեք, ո՞նց կարամ ասեմ՝ խռով եք», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով Լիպոյին ասաց՝ «որ դաննի մամենտ խռով չենք, ո՞նց ես ասում՝ տարին տասներկու ամիս խռով եք» եւ մի քիչ էլ մտածեց ու ժպտալով հարցրեց՝ «կարող ա՞ հիմիկվա էս պահը տարվա տասներկու ամիսների մեջ չի մտնում», եւ ես ժպտալով Զավախյանին ասացի՝ «Լիպոյի սխալը լավ բռնացրիր», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «ինքը որ սովորական մարդ ըլներ, չէի բռնացնի, բայց ամենագետ մարդը սխալ արտահայտություններ թույլ տալու իրավունք չունի», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով Զավախյանին ասաց՝ «սխալս ընդունում եմ, Համեստ Լյովիկ ջան», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ներողամտորեն Լիպոյին ժպտալով ասաց՝ «արի կըլնի՝ ոչ դու ինձի անուն կպցրու, ոչ էլ ես՝ քեզի» եւ մի քիչ էլ մտածեց ու խաղաղասիրաբար ժպտալով ավելացրեց՝ «էս ավելնորդ անուններից ոչ մեկս էլ ա շահ չունենք», եւ Լիպոն խաղաղասիրաբար ժպտալով ասաց՝ «միանգամայն համաձայն եմ, համեստ ջան», եւ Զավախյանը թարս նայեց Լիպոյին ու ասաց՝ «շարունակում ես» եւ մի քիչ մտածեց ու ավելացրեց՝ «գելի գլխին ավետարան կարդացին, ասեց՝ հրե՜ն ոչխարը», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «վերջ. էդ թեման վերջնական փակում ենք», եւ Զավախյանը հարցրեց՝ «ո՞ր թեման», եւ Լիպոն խորամանկ ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «էդ Նոբելյանի թեման», եւ Զավախյանը զարմացած հարցրեց՝ «վաբշե Նոբելյանի՞, թե՞ իմ Նոբելյանի», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «էրկուսն էլ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու անհանգստացած հարցրեց՝ «հիմի ե՞նք փակում, թե՝ վաբշե», եւ Լիպոն ինքնագոհ ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «համ հիմի, համ էլ՝ վաբշե», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու Լիպոյին ասաց՝ «էդ թեման փակելը կամ բացելը քեզանից չի կախված, պարոն ամենագետ» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց՝ «էդ թեման դու չես բաց արել, որ դու փակես», եւ Լիպոն ժպտալով հարցրեց՝ «ո՞ր թեման», եւ Զավախյանը պատասխանեց ու ասաց՝ «Նոբելյանի թեման», եւ Լիպոն խորամանկ ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «վաբշե Նոբելյանի՞, թե՝ քո՛ Նոբելյանի», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «էրկուսն էլ», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «դու ես չէ՞ «Ամենաանկեղծ մարդը» գրքի հեղինակը», եւ Զավախյանն ասաց՝ «ինձանից լավ գիտես, որ ես եմ. ասելիքդ ասա», եւ Լիպոն խորամանկ ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «մի բան որ հարցնեմ, անկեղծորեն կպատասխանե՞ս», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու քամահրանքով ասաց՝ «կփորձեմ», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «ինձանից բացի ուրիշ մեկը կա՞, որ քեզ Նոբելյան մրցանակ կամենա», եւ մինչ Զավախյանը կմտածեր, Լիպոն ասաց՝ «հարցս ճիշտ չձեւակերպեցի», եւ Զավախյանը ժպտալով ասաց՝ «խնդրեմ. ճիշտ ձեւակերպեք», եւ Լիպոն մի քիչ մտածեց ու խորամանկ ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «ինձանից բացի ուրիշ մեկը կա՞, որ քեզ Նոբելյանի արժանի ա համարում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «կա», եւ Լիպոն զարմացած հարցրեց՝ «ո՞վ ա», եւ Զավախյանը ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «ես եմ»:



Շարունակությունը՝ հաջորդ շաբաթ

Ա aravotdaily
ՇԱԲԱԹ 11.02.2012



# Մալաթիայում վերածնվող հայ-թուրքական բարեկամությունը

Դեռեւս վերջերս, երբ ես գտնվում էի Երեւանում, հայրս ինձ զանգահարեց եւ հայտնեց, որ գնացել է Մալաթիայի Բաբուքլու շրջանում գտնվող Քիլթեփեի Հայոց գերեզմանատուն:




Ինքը, որպես մուսուլման մի թուրք, որպես մալաթիացի, ՄալաթիաՀԱՅԴԵՐ-ի (Մալաթիայի հայերի կազմակերպություն) կողմից կառուցվող գերեզմանատան պահակակետը, աղոթատեղին եւ մոգի շենքը տեսնելով, տարիներ շարունակ պահակակետի անմխիթար վիճակը եւ մյուս շինությունների բացակայությունը տեսած լինելով՝ հասարակական համերաշխությանն ուղղված այս քայլի համար շատ էր ուրախացել: Ես էլ շատ էի ուրախացել այստեղ աշխատող բանվորների գործը շուտ ավարտելու համար ջանք չխնայելու եւ ոգեւորությամբ գործն առաջ տանելու համար: Սակայն աշխատողները հայտնեցին նաեւ, որ անհանգիստ մի վիճակ կա թաղամասում: Այդ անհանգստության պատճառը հետեւյալն էր. խոսակցություններ էին տարածվել, որ աղոթատեղին եկեղեցու պես է սարքվելու: Գլխավոր վարպետը հայտնեց նաեւ, որ բնակիչներից ոմանք բողոքել են Մալաթիայի քաղաքապետարանին նշված հանգամանքի առնչությամբ: Արձակուրդս Մալաթիայում անցկացնելու ընթացքում լսեցի քաղաքապետարանի կողմից շինությունները քանդելու մասին լուրը: Կատարվածի իսկությունը եւ հանգամանքները պարզելու համար հորս հետ անմիջապես գնացինք Քիլթեփեի գերեզմանատուն: Իմ միակ մտահոգությունն այն էր, որ գերեզմաններին վնաս հասցրած չլինեն: Վերջապես այդ մտահոգությունս փարատվեց, երբ տեսա, որ գերեզմաններին ոչինչ չի եղել: Շինարարական սարքավորումները գերեզմաններից բավականին հեռու էին գտնվում:

Այստեղ խարխուլ պահակակետում մնացող եւ իր պահակության համար վարձավճար չակնկալող, կամավոր կերպով գերեզմանատանը ծառայություն մատուցող տիկին Նաջիյե Չալըշքանի հետ խոսեցի: Տիկին Նաջիյեն, ով տարիներ շարունակ անվարձահատույց աշխատում է այստեղ, ծաղիկներ է աճեցնում, խնամք է տանում գերեզմանների համար եւ տարիների ընթացքում անգիր է արել բոլոր ննջեցյալների անունները, նշեց, որ շատ էր ուրախացել նոր շինությունների կառուցման կապակցությամբ: Թեպետ ոչ այնքան հաճախ, սակայն երբեմն այցելող մարդկանց մարդավարի հյուրընկալելու եւ իրենց մարդավարի աղոթելու համար պայմաններ ստեղծող նոր շինությունների քանդումը իր երազանքներն էլ կործանել էին եւ արցունքներով արտահայտեց իր ապրումները: Բացի այդ, նշեց, որ հանգուցյալների թաղման նախապատրաստումը կատարվում էր իրենց հարեւանությամբ գտնվող կառույցում, որը որպես մորգ էր ծառայում: Իսկ քանի որ աղոթատեղի չկար, հանգուցյալների հարազատների համար իրենց տան դռները միշտ բաց են եղել եւ առանց դժգոհության ընդունել են նրանց:

Մալաթիայի քաղաքապետը կատարվածը պարզաբանելու համար հրավիրած մամուլի ասուլիսում նշեց, որ դա թյուրիմացություն է եւ հետեւանք է քաղաքապետարանի ու աշխատողների միջեւ կապի բացակայության, եւ իրենք ցավում են կատարվածի համար: Նաեւ նշեց շինության օրինական ներկայացված նախագծից որոշ շեղումների առկայության մասին:

Մենք այս բացատրությունը անկեղծ ենք համարում, եւ քանի դեռ ողջամիտ ժամկետներում կատարվածի հետեւանքները վերացնելուն ուղղված քայլերը շարունակվեն՝ հակառակը մտածելու իրավունք չունենք: Վերջին տարիներին երկու ազգերի, երկու քաղաքակրթությունների հազարամյա բարեկամությունը վերականգնելու եւ իրար հանդեպ կարոտով լցված մարդկանց հարաբերությունները ջերմացնելուն ուղղված քայլերի շարունակականության անհրաժեշտությանը հավատում ենք:

Այս այցի ընթացքում իմ կողքին գտնվող հայրս անցյալում հայ եւ թուրք ժողովուրդների բարեկամությունը ներկայացնող իր ընտանիքի հետ հարեւանություն արած, հարսանիքներին ու թաղումներին, ուրախությանն ու տխրությանը մասնակցած մարդկանց գերեզմանները նորից տեսավ: Մի քանի ամիս առաջ այստեղ հողին հանձնված Փամուքչու Նապոլեոն Գյուրեի գերեզմանը տեսնելով՝ հուզվեց եւ գերեզմանաքարի վրայի ձյունը ձեռքով մաքրելով՝ պատմեց այդ մարդու առաքինությունների, հավատարմության ու բարեկամության մասին: Շրջվելով ինձ եւ տիկին Նաջիյեին՝ ասաց.

«Գիտեք՝ Նապոլեոն Գյուրեի հայրը՝ վարպետ Տիգրանը, մեզ նեղության ժամանակ ձեռք է մեկնել ու նյութական աջակցություն է ցույց տվել: Տարիներ շարունակ մենք նրանցից բամբակ ենք առել, բազկաթոռ ենք սարքել ու վաճառել: Ոչ մի անգամ այս մարդիկ մեզ չեն վիրավորել եւ վնաս չեն տվել: Միշտ բարեւ ենք տվել ու բարեւ առել, միասին հաց ենք կերել, միասին ուրախացել ու միասին տխրել»:

Եղածը՝ եղավ, բայց չկարգավորվող մի հարց՝ չէ: Մալաթիայի քաղաքապետը ողջամիտ, իդեալիստ եւ աշխատասեր մի մարդ է: Միեւնույն ժամանակ ինքն անձամբ խոստացել է ու երաշխավորել, որ շենքը քաղաքապետարանի կողմից վերականգնվելու է: ՄալաթիաՀԱՅԴԵՐ-ի կամավոր անդամներն էլ պետք է շարունակեն քաղաքապետարանի կողքին կանգնելով՝ աջակցություն ցուցաբերել եւ բարեկամության կամուրջը կանգուն պահել: Քանի որ արդեն խորհրդանիշ դարձած Մալաթիան մեծ ուրախությամբ սպասում է Ստամբուլում եւ Հայաստանում ապրող մալաթիացիներին հյուրընկալելու հպարտությունն ու երջանկությունը վայելելուն:

ՄԵՀՄԵԹ ՖԱԹԻՀ ՕԶԹԱՐՍՈՒ

## Մարզպետը խառնել է պետական եւ կուսակցական գործը



Երեքշաբթի օրը՝ փետրվարի 7-ին Պտղավան կատարած այցի ժամանակ Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը Պտղավանի գյուղապետարանի շենքում ՀՀԿ անդամատոմսեր է հանձնել մի խումբ պտղավանցիների: Այդ կադրերը ցուցադրվել են մարզային «Տավուշ» հեռուստաընկերության եթերում: Փաստորեն՝ աշխատանքային օրը, աշխատանքային ժամի մարզպետը զբաղվել է կուսակցական գործով: Արմեն Ղուլարյանը նաեւ ՀՀԿ մարզային կառույցի ղեկավարն է: Հայաստանի իշխանությունները հավաստիացնում են, որ գալիք խորհրդարանական ընտրություններն ազատ, արդար եւ թափանցիկ են լինելու: Եթե ընտրություններից 3 ամիս առաջ խախտվում է օրենքը, վարչական ռեսուրսներ են օգտագործվում, ապա կարելի է ենթադրել, թե ինչ կլինի մայիսին:

ՌՈՒԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Աստծունը՝ Աստծուն, Սասունինը՝ Սասունին»

«Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի եւ կարելի լինի համեմատել մարդ կոչումի հետ»:

Հովհաննես Թումանյանի վերոնշյալ խոսքերի վավերացման փաստերի հետ ծանոթանալու բախտավոր առիթն ինձ ներկայացավ 2008թ. մարտյան ողբերգական դեպքերից հետո շատերի բանտերում հայտնվելով, ուր եւ շատ մոտիկից շփվելով՝ ճանաչեցի մեր ժամանակների իրական հերոս Սասուն Միքայելյանին:

Նա մարդկային բարոյական բարձր հատկանիշներով օժտված, իրադարձություններին ամենասովորական հայ մարդու մտածողությամբ նայող, իրերի վիճակը ամենայն անկեղծությամբ գնահատող, վերլուծող, իր հողի վրա ծնված-մեծացած գյուղացի, պարզ մարդ էր:

Սասունի յուրաքանչյուր խոսքում մեր վաղվա հանդեպ խորը մտահոգություն, տխուր իրավիճակի առթիվ՝ ցավ, երկրի միակ տիրոջ՝ ժողովրդի հանդեպ անսահման սեր կար: Նա անարդարություն չհանդուրժող նկարագրի տեր մարդ, քաղաքական մանրազնին վերլուծությունները՝ «զնդաններից ժամ առաջ դուրս գալով, երկիրը աղետից փրկենք» եզրահանգման հասցնելով, արդար Հայաստան ունենալու մաքուր նպատակով էր մշտապես շնչում, քնում ու զարթնում:

Ազգն ու հայրենիքը իր հերոսներին ծնում են միմիայն իրենց գոյությանը սպառնացող, դժվար, տագնապալի պահերին: Սասունը մեր ազգային զարթոնքի գագաթնակետ հանդիսացող Արցախյան շարժման առաջին իսկ օրվանից մասնակիցը լինելու պատվին, մարտի դաշտում ստացած, մինչ այսօր էլ իր մարմնում առկա վերքերով հերոս մկրտվելու, ամբողջ ազգի սիրելին դառնալու բախտին արժանացածների թվում, ռազմի դաշտում ունեցած ազնվությունը նույնությամբ պահպանած շատ քչերից է:

Հրադադարին հաջորդած ժամանակահատվածում Սասունը, իր ապրած Հրազդանի շրջանի ազգաբնակչության հետպատերազմյան տարաբնույթ եւ շատերի համար անլուծելի թվացող հազար ու մի խնդիրների հաղթահարման պատասխանատու գործին լծվելով՝ այնպիսի հաջողությունների է հասել, որ ոչ միայն ժողովրդի անվերապահ վստահության, սեր ու հարգանքին է արժանացել, այլ պետական բոլորիս քաջածանոթ այս արատավոր ապարատին փաստորեն ցույց տվել, թե ինչպիսին պետք է լինի Սահմանադրությամբ ամրագրված «իշխանությունները ծառայում են ժողովրդին» խոսքերը ազնվորեն գործի վերածող պաշտոնյան:



Անկեղծ մտքի, մաքուր խղճի տեր, մշտապես ժողովրդի գտնված խրամատում իր արժանի տեղը զբաղեցնելու պարկեշտությունն ունեցող, երկար տարիների անազատության տառապալից փորձությունը եւս պատվով անցնելով եւ դրանից էլ ավելի կոփված դուրս եկած Սասունն իր հայրենի ժողովրդին կրկին անգամ ծառայելու հայտ է ներկայացրել: Բավականին լավ ճանաչելով իրեն՝ առավել քան վստահ եմ, որ Հրազդանի քաղաքապետ ընտրվելու դեպքում, նա բոլորիս ցույց է տալու սեփական ժողովրդին սիրող ազնիվ հայ մարդու սքանչելի որակները եւ քաղաքական դաշտում դառնալու է մեր երազած փոփոխություններին ընդառաջ ամենակարեւոր հանգրվանը:

Սակայն ճանաչելով նաեւ գործող իշխանություններին՝ գիտեմ, որ նրանց զինանոցը տմարդությունների պակաս չունի, եւ նրանք կփորձեն հերթական անգամ ժողովրդի ձայնը գողանալու ճամփով գնալ: Սակայն Սասունը եւս ունի մի զենք, որ իշխանությունները չունեն եւ այդ զենքն իր պարզությունն է, շիտակությունը, անկեղծությունն ու մաքրությունը, սերն ու նվիրվածությունը իր հողի ու ջրի մարդկանց հանդեպ եւ ամենակարեւորը՝ հավատքը դեպի մեր վաղվա օրը ու ինքնավստահությունը վերջապես բոլոր տեսակի դժվարությունները հաղթահարելու համար: Ուստի նա ունի այդ ամենը, ինչ անհրաժեշտ է առաջիկա կիրակի օրը սպասվող ընտրություններում հաղթելու համար, մնում է հուսալ, որ եղածը բավարար է մեր երկրի հպարտ քաղաքացիների կամարտահայտության շնորհիվ Սասունի պես հայորդուն արժանվույնս գնահատելով՝ սպասվող հաղթանակն ապահովելուն:

Սասունն արժանի է այդ հաղթանակին, քանի որ դա մեր իրավազուրկ ժողովրդի հաղթանակն է լինելու:

ՍԱՐԳԻՍ ՀԱՑՊԱՆԵԱՆ
Նախկին քաղբանտարկյալ

Առավոտ aravot daily
ՇԱԲԱԹ 11.02.2012

# Կրասնոդարցի սոպրանոն կհանդիպի օպերայի գեղարվեստական խորհրդին

Հայաստանում է կրասնոդարցի երգչուհի Մարիետա Դերլուղյանը՝ իր առաջին CD-ն ձայնագրելու նպատակով: Վոկալիստների համառուսաստանյան մրցույթի դափնեկիր (2007թ.) կոլորատուրային սոպրանոն տասը տարի պրոֆեսիոնալ բեմում է, ինչը զուգահեռում է Կրասնոդարի Սուրբ Հովհաննես, իսկ 2010-ից էլ՝ Սուրբ Մեսրոպ եւ Սահակ եկեղեցիներում հոգեւոր երաժշտություն հնչեցնելով:

«CD-ի ձայնագրման, հետագայում թողարկման աշխատանքներին աջակցում է Կրասնոդարի Պաշկովյան շրջանի հայկական մշակութային կենտրոնը: Ձայնագրությունները կիրականացվեն Ռուբեն Ասատրյանի ղեկավարած «Վերածնունդ» կամերային նվագախմբի ընկերակցությամբ: CD-ում տեղ կգտնեն հոգեւոր երգեր, Կոմիտաս, Բաբաջանյան, մի խոսքով՝ միայն հայկական երաժշտություն»,- տեղեկացրեց երգչուհին: Հավելեց նաեւ, որ ընտանեկան հանգամանքներից ելնելով՝ հիմնական բեմական գործունեությունը ընթացել է ծննդավայրում եւ Ռուսաստանի այլ քաղաքներում:

Հետաքրքրությանը, թե ինչու է ընտրել ազատ արվեստագետի ուղին, օրինակ՝ չընդգրկվելով



Կրասնոդարի ճանաչված երաժշտական թատրոնում, Մարիետա Դերլուղյանը պատասխանեց հարցի երկրորդ մասին. «Շուտով բալետային տարբերակով թատրոնում բեմադրվելու է ժամանակակից ներկայացում՝ ըստ Մոցարտի «Կախարդական սրինգի», որտեղ ինձ հրավիրել են կատարելու գիշերային թագուհու արիան: Թատրոնում մշտապես ներկայացումներ են իրականացնում անվանի բեմադրիչներ, այդ թվում՝ Յուրի Գրիգորովիչը, Ալեքսեյ Ստեպանյուկը, Դմիտրի Բերտմանը եւ ուրիշներ, խաղացանկում են Խաչատրյանի «Սպարտակը», Բիզեի «Կարմենը», Չայկովսկու «Եվգենի Օնեգինը» եւ այլ գլուխգործոցներ»: Երգչուհին նշեց, որ դժգոհ չէ ազատ արվեստագետի իր կարգավիճակից. «Վերջերս եկեղեցում իմ ելույթով տպավորվել էր աշխարհահռչակ Միշել Լեգրանը, նրա ռուսաստանյան պրոդյուսերն էլ խոստացել է, որ մաեստրոն ինձ կներկայացնի Ֆրանսիայի հանդիսատեսին»:

Զրույցի ընթացքում երգչուհին անընդհատ խոսում էր կոնկրետ Կրասնոդարում բնակվող տաղանդավոր հայազգի երաժիշտներից: Ռեպլիկին, թե ի վերջո նրանցից ո՞վ է «ամենանը», մեր զրուցակիցը տվեց տաղանդավոր սաքսոֆոնահար, ջազմեն Գեորգի Գարանյանի անունը:

Հարցին՝ մտադիր չէ՞ ներկայանալ նաեւ հայաստանցի հանդիսատեսին, Մարիետա Դերլուղյանը պատասխանեց. «CD-իս ձայնագրման աշխատանքների ավարտից հետո կուզեի ներկայանալ Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի խորհրդին...»: Ի դեպ, նա տեղեկացրեց, որ Կրասնոդարում շատ է խոսվում այն մասին, թե ճանաչված օպերային տենոր Գեղամ Գրիգորյանը Գառնիում հիմնելու է մեկ այլ օպերային թատրոն:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հ. Գ. Գեղամ Գրիգորյանն այս օրերին Վիլնյուսում է գտնվում: Նրանից համապատասխան մեկնաբանություն կստանանք, երբ վերադառնա Հայաստան:

# Եղեռն վերապրածի թոռը զայրացած է




Վերջերս Ռուսաստանում լույս է տեսել թուրք գրող Մեհմեդ Փերինչեկի «Հայկական հարցը՝ կազմված ռուսական պետական արխիվների 120 փաստաթղթերից» գիրքը, որը, հայ մասնագետների համոզմամբ, սովորական ապատեղեկատվություն է: Գրքում ասվում է, թե Առաջին համաշխարհայինի ժամանակ տեղի է ունեցել ժողովուրդների բախում, որի արդյունքում տուժել են թե հայերը, թե քրդերն ու թուրքերը: Թուրք գրողը իր տեսանկյունից ներկայացնելով ժամանակի անցքերը՝ գրում է, թե իբր հայերը փորձել են էթնիկական զտում կատարել եւ ոչնչացնել բոլոր թուրքերին, ինչը կանխելու նպատակով էլ թուրքական կառավարությունը ստիպված է եղել համապատասխան միջոցներ ձեռնարկել եւ ճնշել ապստամբությունը:

Ասուլիսներից մեկում Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը նշել էր, որ չնայած այդ գրքում նշված է, որ օգտագործված է 120 փաստաթուղթ՝ Ռուսաստանի արխիվից, սակայն դրանք ընդամենը 63- ն են, մնացած 57-ը բոլշեւիկյան «սուտ փաստաթղթերն» են:

Ազգային արխիվի տնօրենը նաեւ հավելել էր, որ այդ ապատեղեկատվությանը հարված կհասցվի առաջիկայում տպագրվելիք եռահատոր «Վշտապատումով», որտեղ հարցազրույցներ են եղեռնից մազապուրծ փրկվածների հետ: Ականատեսների վկայություններում անգամ անուններով նշվում են թուրք ոստիկանապետերն ու բեկերը:

Հայկական արխիվի պահոցներից մեկում պահվում են նաեւ եղեռնի ականատես Պողոս Ավետիսյանի վկայությունները՝ Վանի նահանգի Արճակի գավառակի կոտորածների մասին, ըստ որոնց. «Ոստիկանները ամեն տեսակ սանձարձակություններ էին անում, զանազան պատրվակներով մտնում էին մարդկանց տները եւ դիպչում հայ կանանց: Օրերով կերուխումներ ու խնջույքներ էին կազմակերպում գյուղացիների հաշվին, իսկ բավարարված չլինելու պարագայում՝ ծեծի ու խոշտանգումի ենթարկում: Զորահավաքության վերջին օրերին արդեն առանց փաստաթղթերի էին ներխուժում գյուղ՝ աչքի ընկած մարդկանց գցում իրենց ոտքերի տակ՝ չնայելով տարիքին: Գյուղից մեծ քանակությամբ խոտ, վառելիք, գարի, ցորեն, թաթ, թաթման, ոչխար, ձավար էին հավաքում՝ առանց փողի եւ դրա փոխարեն դեռ մի բան էլ հարվածում էին մահակներով: Գյուղացիները հակաճառելու դեպքում դաժան չարչարանքների, նախատինքների ու ծաղրի էին ենթարկվում... Ջարդը սկսվել էր Վանի ապրիլյան կռիվներին զուգընթաց, քրդերի գլխավորն էր Ռսպի Սալոն, իսկ նրա սպասավորը՝ Խաչոն: Ջարդը սկսվել էր Վանի կուսակալ Ջեւդեթ բեյի արտոնագրով»:

Նման հիշողություններ թողած Պողոս Ավետիսյանի թոռներից Գաբրիել Ավետիսյանը նեղսրտելով հակահայկական ապատեղեկատվության հեղեղից, եկել էր խմբագրություն, իր հետ բերելով որոշ փաստաթղթեր: «Հայրիկիս պապը՝ Պողոս Ավետիսյանը, քահանա էր, երիտասարդ, ամրակազմ, հասցրել էր 40 տան քավոր լինել: Գաղթի ժամանակ թուրքերը սպանել են կնոջը, տասնմեկ երեխաներից ողջ են մնացել միայն երեքը: Տղաներից մեկին սպանել են հենց իր իսկ հարսանիքի ժամանակ...Ախր ոնց կարելի է նման բաներն ուրանալ... Մեր գերդաստանը նրանց անունները երբեք չի մոռանա, ես իմ թոռներին ու թոռներին կնքելու եմ իմ պապուպապերի անուններով: Թուրքերին ես անվանում եմ գայլեր՝ գառների մուշտակներով: 95 տարի անց ես գտել եմ իմ հայրիկի պապիկի գրառում-հուշերը, որտեղ նա մանրամասն պատմում է, թե ինչպես թուրքերը կոտորեցին մեր ազգին ու դաժանաբար վարվեցին հայերի հետ: Իսկ Մոսկվայում սուտ են խոսում, հորինել են...»: Եղեռն վերապրածի թոռը զայրացած է, ուզում է պետական մակարդակով հակահարված տրվի ապատեղեկատվության տարափին ու զեղծարարություններին, թե չէ, իր ձեւակերպմամբ՝ զոհերի ոսկորները չեն կարող հանգիստ հանգչել:

ԱՆԺԵԼԱ ՇԱՀՈՒՄՅԱՆ

## Ըստ նախարարի, պետհամարանիշի զրոների քանակը չափանիշ չէ




Երեկ ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ Երեւանի պետական համալսարանի եւ ՀՀ արդարադատության նախարարության միջեւ հուշագրի ստորագրում, ինչը նպատակ ուներ ապահովել ԵՊՀ ուսանողների տեսական գիտելիքների գործնական կիրառումը եւ մասնագիտական փորձի միջոցով կիրառական հմտությունների ձեռքբերումը: Կարեւորելով հուշագրի ստորագրումը՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը նշեց, որ դրանով սկիզբ է դրվում համալսարանի եւ նախարարության միջեւ համագործակցության նոր շրջանին. «Այն կնպաստի հատկապես իրավաբանության եւ միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողների գիտելիքների ձեռքբերմանը եւ իրավունքի ոլորտում մասնագետների համալրմանը»:

Արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի խոսքերով՝ հուշագրի ստորագրումը քայլ է՝ նախարարության եւ համալսարանի ուժերը մեկտեղելու հարցում, ինչը կնպաստի առկա խնդիրների լուծմանը. «Որ հետագայում որեւէ մեկը չասի՝ ով է գրել այս կամ այն օրենքը: Մեր երկիրը չունի մեծ պաշարներ, եւ միակ զենքը գիտելիքն է: Եթե խնդիրների լուծման հիմքը այսօր չդնենք, ապա կթողնենք՝ մնա վաղվա օրվան, ինչը ցանկալի չէ»: Նախարարը հավելեց, որ հայրենասեր է այն մարդը, ով իր տեղում իր աշխատանքն է կատարում, իսկ ուսանողների աշխատանքը գիտելիք ստանալն է, քանի որ կրթված մարդն է հետագայում ունենալու դեր եւ պաշտոն. «Թե չէ՝ պետհամարանիշների զրոների քանակը չափանիշ չէ»:

Հուշագրի համաձայն՝ արդարադատության նախարարությունում կկազմակերպվի գործնական պրակտիկա, որի ընթացքում կկիրառվեն տեսական գիտելիքները: Հրայր Թովմասյանի հավաստմամբ՝ ուսանողները ստիպված չեն լինի սուրճ դնել կամ թղթեր տանել-բերել՝ հուշագրում մանրամասն նշված է, թե ինչպես է կազմակերպվելու եւ անցկացվելու պրակտիկան:

Արդարադատության նախարարության կազմակերպած «Գրքեր դատապարտյալներին» ծրագրի շրջանակներում ԵՊՀ-ն գրքեր նվիրեց նախարարության քրեակատարողական հիմնարկների գրադարաններին:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ



ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

# Երեւանյան դրվագներ

## Աբովյանով ճեմելը

Հաղթանակից հետո, ինչպես ծանր նիրհից հետո, մեր այնքան տառապանք տեսած ժողովուրդը խոսքը մեկ արած լցվեց Աբովյան փողոց եւ շատ շուտով դա կայուն սովորույթ դարձավ՝ եւ 40, եւ 50-ական թվականներին՝ ճեմել Աբովյան փողոցով: Դա մի ամբողջ ռիտուալ էր, որն իհարկե հիմնականում հնարավոր էր դառնում ամռան եւ աշնան ամիսներին: Մարդիկ հագնում էին ունեցած ամենալավ հագուստները (եթե, իհարկե, հնարավոր էր մի բան ճարել երեւանյան խանութներում), բայց կարեւորը վերջապես ոչ թե թանկ հագուստն էր, այլ մարդկանց տրամադրությունը, իսկ տրամադրությունը ստեղծվում էր հենց Աբովյան փողոցում: Այն դարձել էր հանդիպման սիրելի վայր: Մարդիկ երեկոյան կողմը գալիս էին այդ փողոցը Երեւանի բոլոր կողմերից, հիմնականում զույգերով, եւ պարզապես ճեմում էին կինո «Մոսկվայից» Հրապարակ, Հրապարակից՝ կինո «Մոսկվա», փողոցի աջ եւ ձախ մայթերով: Թերեւս «Ինտուրիստ» հյուրանոցի կողմի մայթը ավելի սիրված էր: Այդպես ճեմում էին, անշտապ, անհոգ ու ազատ: Ճեմելը ոչ ոք չէր կարող լիմիտավորել. երկիրը նոր էր հաղթանակ տարել ծանր պատերազմում, զինվորները տուն էին եկել, բազում հարսանիքներ էին եղել, ապա եւ բազում նորածիններ, գները, մանավանդ սնընդամթերքի, այսպես թե այնպես մատչելի էին դառնում, չնայած ժողովուրդը աշխատավարձի ձեւով կոպեկներ էր ստանում, բայց գներն իրավունք չկար բարձրացնելու, եւ կյանքը որոշակի ձեւով կայունանում էր: Վաղվա օրը ավելի հույս էր ներշնչում: Այստեղից եւ ցանկությունը, որը կոչվում էր «Աբովյանով ման գալ»:

Քաղաքը այդ տարիներին շատ բնակչություն չուներ. շատերն իրար ճանաչում էին, սիրալիր բարեւում էին, ժպտում, մի պահ կանգնում, մեկ-երկու խոսք փոխանակում: Թեեւ կանանց շորերը համեստ էին, սակայն եթե կային կանացի բարեձեւությունները, ապա դրանք, ուզենաս թե չուզենաս, միեւնույն է, պիտի երեւային:

Եվ իր հերթին շատ նուրբ ձեւով նշմարվեին եւ գնահատվեին հիսունականների հայ տղամարդկանց կողմից, բնականաբար առաջացնելով երկկողմ տոնական տրամադրություն: Կանայք էլ, անշուշտ, զգում էին, որ իրենք, իրենց քայլվածքը, շարժուձեւը, ժպիտը եւ մանավանդ հայացքը գնահատվում է եւ արձագանք է գտնում հակառակ սեռի ճեմողների կողմից: Եվ այս գիտակցությունը նրանց մոտ էլ տոնական նոր, անսովոր, բայց հաճելի զգացմունքներ էր առաջ բերում:

Ահա թե ինչու էր սիրված ճեմելը Աբովյան փողոցով: Նշված հատվածում ոչ մի սրճարան (կաֆե, բար կամ բուֆետ) չկար, միայն մի հատ ջրերի խանութ՝ Հայֆիլհարմոնիայի շենքի դիմաց, եւ այնտեղ կարելի էր զովացուցիչ ջուր, հյութ կամ լիմոնադ խմել, իսկ 1950-ական թթ՝. ինչպես նաեւ «Սովետական շամպայն»:

Մեկ էլ կար մի շատ ճաշակով եւ համեստ, փոքրիկ բուֆետ Աբովյանում խոյացած Երեւանի կենտրոնական ունիվերմագի ինքնատիպ, մոդեռն շենքի եւ հայտնի գաստրոնոմի միջեւ: Այդ բուֆետը, ուր շատ լավ սուրճ էին տալիս, կոչվում էր Մարսելի բուֆետ, ֆրանսահայ բուֆետապանի անունով: Եվ մեկ էլ կար մի շքեղ ռեստորան, ունիվերմագի երրորդ հարկում, բացված ՏրՏոՑՏՐՉ-ի խանութ-սրահին կից, ուր առեւտուրը վալյուտայով էր, ռեստորանը այդպես էլ կոչվում էր՝ ՏրՏոՑՏՐՉ: Սակայն դա ոչ մեծաքանակ, բարձր եկամուտ ունեցող խավի համար էր: Բայց ուտել-խմելը այդ շրջանում էական չէր, կարելի էր այդ հատվածում բարձր մայթին դրած սառնարան-արկղերից պաղպաղակ գնել,- թե լիմոնադը, թե պաղպաղակը կոպեկներ արժեին,- եւ երեւանցիք շռայլ թույլ էին տալիս իրենք իրենց հյուրասիրել պաղպաղակով: Երեկոյան ավելի ուշ փողոցն էլ կախարդական էր դառնում, կանանց աչքերն ավելի էին փայլում, եւ շուրջբոլորը բռնվում էր այն տարիներին այնքան տարածված եւ շա՜տ կանանց կողմից այնքան երազած «Կրասնայա Մոսկվա» կանացի օծանելիքի բույրով: Հիշյալ դուխին ստալինյան շրջանի պարգեւն էր սովետական կանանց, այն մեր խորհրդային «Շանելն» էր: Եվ հարկ է ասել, ինչքան ես հիշում եմ, նա հիանալի բուրմունք ուներ: Տուփը կաս-կարմիր էր, սրվակը՝ շատ գեղեցիկ, արտադրվում էր Մոսկվայում, կարծեմ «ՒՉՏոՏՊՈ» անունը կրող «կՈՐԻ ՎՈՐՎՈ ԻՌոՐՌՍՈ»-ի կողմից եւ բավական թանկ արժեր: Ով հիշում է այդ հոտը, կհիշի նաեւ, որ «Կրասնայա Մոսկվան» մեծ դեր է խաղացել եւ թույլ տվել, որ սովետական կինը իրեն մի քիչ կին զգա: Այն մի քանի կաթիլը, որ կանացի մատները տանում էին իրենց տիրուհու քունքին, կամ ծնոտի տակին, անշուշտ, եւ ինքնազգացողություն էին բարձրացնում, եւ թույլ տալիս մտածել, որ կարող են ավելի դուր գալ, հաճելի լինել իրենց հետ Աբովյան փողոցով ճեմող կողակցին, ընկերոջը կամ ազատ ունկնդրի կարգավիճակով անցնող անծանոթին: Որքան էլ զարմանալի չլինի, այդ տարիներին Պրոսպեկտը երեկոյան ժամերին համարյա դատարկ էր լինում:




Օ՜, 50-ականների կանայք ի՜նչ հնարամտություն պետք է գործածեին, որ կարողանային երեւանյան ունիվերմագի նեղ շտեմարաններից ձեռք բերել հագնել-կարելու պիտանի շորեր… Էլ չենք խոսում ներքնազգեստի մասին, որն, ինչպես գիտեք, հիմք դարձավ բացահայտելու ռուսական գեղեցիկ գործակալուհուն՝ Ռուբեն Մամուլյանի աղմկահարույց «ԽՈտՐՏվՏՉօո փցսՏՍ» հակախորհրդային ֆիլմում:

Եվ այնուամենայնիվ երեւանյան կանայք, հենց միայն Աբովյանով ճեմելու համար, ջանք ու եռանդ չէին խնայում գեղեցիկ երեւալու երկայն «դեմիսեզոնային» վերարկուները հագած ու ֆետրե լայնեզր շլյապաները դրած իրենց նշանած-ընկերոջ կամ ամուսնու կողքին: Եվ որ նրանց տեսքը քիչ թե շատ համահունչ լինի ժամանակի նորաձեւության պահանջներին, քիչ դեր չխաղացին 40-ական թվականների վերջերից մեծ թվով Հայաստան եկած հայրենադարձները եւ հայրենադարձուհիները, որոնց տողերիս հեղինակը իր էսսեներից մեկում սիրով անվանել է «մեր ախպարները»: Նրանց մեջ կային շատ շնորհքով դերձակ-դերձակուհիներ, որոնք իրենց աչքով տեսած լինելով «դրսի աշխարհների» կանանց «կարգն ու հագը» եւ իրենք էլ ունենալով բնածին ճաշակ, արեցին ամեն ինչ, որ մեր համաքաղաքացուհիներն ավելի գեղեցիկ եւ, որ ավելի կարեւոր է, ավելի գրավիչ երեւան: Հմուտ վարպետները խորհրդային տրիկոտաժի արտադրանքից էլ կարող էին ճաշակով զգեստ ձեւել, ինչն իր հերթին կպարգեւեր երջանկության պահեր այնքան դառնություններ ճաշակած մեր բնակչության կանացի հատվածին:

Երբեք, ի դեպ, հեշտ, դյուրին կամ անվրդով չի եղել հայ կնոջ վիճակը, եւ այն փոքր ուրախությունը եւ աննկատ ինքնուրույնությունը, որ տալիս էր Աբովյանով ճեմելը, պետք էր թանկ գնահատել:

Հանաք բան չէր, Աբովյանով զբոսնելիս կարող էիր տեսնել բոլոր ժամանակների հայ ամենականացի տիկնանցից մեկին՝ Մետաքսյա Սիմոնյանին: Ինչպե՜ս էր նա քայլում արտույտի մանրիկ, շնորոր քայլվածքով, բնական նազանքով, ինչն արտահայտվում էր նրա յուրաքանչյուր շարժման մեջ, եւ թվում էր, թե նա ոչ թե քայլում է, այլ մի շքեղ գոնդոլա է ճեղքումանցնում Աբովյան փողոցով՝ առաջ բերելով հիացմունքի ալիք: Իսկ այն երջանիկը, որ կարժանանար նրա հայացքին, երբ գեղեցիկ աչքերը անպայման պետք է մեղմորեն ձախից աջ գնային եւ աջ հոնքն էլ մի փոքր վեր ձգվեր, երկար, շա՜տ երկար պիտի հիշեր Մետաքսյայի հայացքը:

Սունդուկյան թատրոնից Աբովյանով վեր գնացող լեգենդար կանանց մեջ կարող էիր տեսնել իրենց գեղեցկությամբ ու կանացի թովչանքով առինքնող մեր դերասանուհիներից Իզաբելլա Դանզասին, Եվգինե Սեբարին, Բելլա Իսահակյանին, Ժենյա Սարգսյանին, Օֆելյա Սաղաթելյանին, երգչուհիներից՝ դեռ այն տարիներին երեւանցի Զառա Դոլուխանովային, Գոհար Գալաչյանին, Լուսիկ Քոշյանին, պարուհիներ Ելենա Արարատովային, Անժելիկա Մալխասյանին, Արեւ Բաղդասարյանին, պարզապես սիրուն Եվային կամ Լեյլիին… Այս գեղեցկուհիները եւ ճշմարիտ աստղերը պտրում էին Երեւանում եւ զարդարում էին իրենցով Աբովյանը, ինչպես ամռան գիշերները աստղերը զարդարում են երկինքը:

Յուրաքանչյուր ակնթարթ Աբովյանը կարող էր մի բուռ երջանկություն պարգեւել մարդուն, ինչպես ծաղկավաճառ Կարաբալան, որն անսխալ կերպով ընտրում էր ճեմողների շարքում ամենագեղեցիկին ու նվիրում իր ծղոտե զամբյուղի ամենագեղեցիկ ծաղիկը եւ մի երջանիկ զգացում ապրում, քանզի գեղեցիկ կնոջը ծաղիկն ավելի է գեղեցկացնում…

Ինչպես նկատեցիք, ճեմողների մեջ հիշատակեցի միայն կանանց անունները եւ թեեւ նրանցից շատերը վաղուց արդեն չկան, սակայն Աբովյանի մայթերին դաջված են նրանց ոտնահետքերը, եւ երկար կմնան:

…Հրապարակում շա՜տ գեղեցիկ ամանորյա եղեւնի է, այս տարվա նման նա գեղեցիկ երբեք չէր եղել, օրը մթնում է, Աբովյանը լուսավառվում է հազար ու մի լապտերներով բռնկված, բացվում են անթիվ-անհամար սրճարանները, բարերն ու ռեստորանները, փողոցով վարար գետի պես անցնում է սեւ, փայլուն կողերով, շքեղ ու թանկարժեք մեքենաների շքերթը: Քաղաքն անցնում է գիշերային կրքերի ձեռքը, Աբովյանի մայթերից գալիս է «Շանելի», «Ժադորի» բույրը, լսվում են անգլերեն, պարսկերեն, ռուսերեն խոսակցության պատառիկներ, կանացի ճաշակավոր հագուստների շքեղահանդես է Աբովյանը: Արագ ու թեթեւ ճեմելով հենց նոր անցան Առնո Բաբաջանյանի սրահի ուղղությամբ անցան Նազենի Հովհաննիսյանը, Քրիստինե Պեպելյանը…

Ես բարձրանում եմ Աբովյանով. ծաղիկները վաճառել գնացել է Կարաբալան, ունիվերմագի գաստրոնոմի դռները փակ են… Էս ժամին միայն պահակից կարող ես օղի առնել: Խանոյանի ֆոտոյի ցուցափեղկից քեզ են նայում Հրաչյա Ներսիսյանն ու Ֆրունզիկ Մկրտչյանը: Նրանք հենց նոր անցան կողքիցս ու մտան «Ինտուրիստի» ճաշարանը, ուր խորքի դահլիճում փոքրիկ սեղանի շուրջ գրույցի են բռնվել՝ կոնյակի ու սուրճի ընկերակցությամբ, Չարենցն ու Իսահակյանը եւ իրենց խոսքում, հիշելիս երեւանյան գեղեցկուհիներին, անպայման հիշում են Արմենուհի Տիգրանյանին եւ Արուս Ոսկանյանին…

Մինչեւ «Ինտուրիստի» սրահ մտնելը Հրաչը Քյավառեցի Խաչիկի բուֆետում ըմպում է իր 50 գրամ կոնյակը, նրան աչքով է անում դերասան Գենը. «Քոնը առաջինն է, իսկ իմը արդեն հինգերորդը», նախասրահից գալիս է Քոչարի ծխամորճի հաճելի բուրմունքը, ջազ-նվագախումբը թեժ գործի մեջ է, լսվում է Չոռնի Սուրիկի կլարնետի եւ Հայրիկոյի երգի ձայնը…

Կյանքը շարունակվում է. 2012 թվականի հունվարի յոթն է:

# 3 տարի տեւած դատական գործն ավարտվեց ԻԱԿ-ի հաղթանակով

Տեղեկատվությունը թաքցնելու համար «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը համառ պայքարեց 3 տարի՝ դատական բողոքարկումների վրա վատնելով պետական ռեսուրսները: 2012թ. հունվարի 18-ին ՀՀ վճռաբեկ դատարանը վերջ դրեց տեղեկատվություն ստանալու համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնի եռամյա պայքարին՝ վերջնականապես մերժելով «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի վճռաբեկ բողոքի ընդունումը:

ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու հարցում էր ուղարկել ՊՈԱԿ-ին դեռեւս 2009թ.-ի փետրվարի 27-ին՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել ՊՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ, այդ թվում՝ 2006, 2007, 2008թթ. ՊՈԱԿ-ի հետ հանձնարարության եւ նկարագրության պայմանագիր կնքած կազմակերպությունների ցանկը եւ այդ պայմանագրերից ՊՈԱԿ-ի ստացած հասույթի չափը: Ի պատասխան՝ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը հայտնել էր, որ ԻԱԿ-ի պահանջած տեղեկությունները համարվում են առեւտրային գաղտնիք: Այս պատասխանն անհեթեթ էր, քանի որ ՊՈԱԿ-ը ոչ առեւտրային կազմակերպություն է, չի հետապնդում առեւտրային շահ, հետեւաբար չի կարող ունենալ առեւտրային գաղտնիք: Հարկ է նշել, որ պահանջվող տեղեկությունները անգամ ՊՈԱԿ-ի հետ պայմանագիր



կնքած կազմակերպությունների առեւտրային շահ չեն կարող համարվել, քանի որ ԻԱԿ-ը խնդրել է ընդհանուր հասույթի վերաբերյալ տեղեկություն՝ այլ ոչ յուրաքանչյուր կազմակերպությունից ստացված գումարի չափը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնն այս անհիմն մերժումը բողոքարկեց դատարան: Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012թ. հունվարի 18-ի որոշմամբ ուժի մեջ թողնվեց ՀՀ վարչական դատարանի 2011թ. հունվարի 20-ի կայացրած որոշումը, համաձայն որի՝ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործողությունները ճանաչվեցին ոչ իրավաչափ, ՊՈԱԿ-ին պարտավորեցվեց հնգօրյա ժամկետում տրամադրել ԻԱԿ-ի պահանջած տեղեկատվությունը եւ հօգուտ ԻԱԿ-ի վճարել 24.000 դրամ, որպես ԻԱԿ-ի դատական ծախսերի փոխհատուցում:

Սեփ. լր.

VIVAcell MTS

# ԷՔԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Լեւոն Արոնյան- Բաքու 2:0



Շախմատի աշխարհի թագի համար այս տարի անցկացվելիք հավակնորդների մրցամարտը կանցկացվի Լոնդոնում:

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, դրան հավակնում էր նաեւ Բաքուն: Սակայն մրցաշարի հաղթողի գլխավոր հավակնորդ Լեւոն Արոնյանը կրկին կտրականապես մերժել էր իր մուտքը Ադրբեջանի մայրաքաղաք, ինչի մասին պաշտոնապես տեղեկացրել էր ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովին եւ ՖԻԴԵ-ի նախագահական խորհրդին: Սա արդեն երկրորդ անգամ է, որ Ադրբեջանի համառ նախաձեռնությամբ սկզբունքային հեռակա պայքար է ծավալվում Արոնյան անհատի եւ հարեւան երկրի շախմատային ֆեդերացիայի միջեւ, եւ երկրորդ անգամ այն ավարտվում է հայ գրոսմայստերի արդարացի ու անվերապահ հաղթանակով:

ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը, որին նախագահական խորհուրդը հանձնարարել էր մինչեւ փետրվարի 29-ը վերջնական որոշում կայացնել եւ այդ մասին պաշտոնական հայտարարություն անել, երկար չերկմտեց ու որոշեց, որ հավակնորդները կխաղան Լոնդոնում՝ հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 13-ը: Արդեն պաշտոնապես հայտարարվել է նաեւ, որ ՖԻԴԵ-ն մրցաշարի կազմակերպումը վստահել է ամերիկյան նորաստեղծ «Ագոն» բիզնես ընկերությանը:

## Արոնյան-Կրամնիկ մրցամարտը կկայանա ապրիլին՝ Շվեյցարիայում

Հայտնի դարձան Լեւոն Արոնյան-Վլադիմիր Կրամնիկ մրցամարտի անցկացման վայրն ու ժամկետները: Այն կկայանա Շվեյցարիայում, ապրիլի 21-28-ը՝ Hotel Savoy En Ville հյուրանոցում:

Սա շախմատի պատմության մեջ առաջին անգամ է, որ խաղատախտակի առջեւ միմյանց դեմ խաղալու են ՖԻԴԵ-ի վարկանիշային դասակարգման ցուցակի 2-րդ եւ 3-րդ համարները, ինչպես նաեւ գրոսմայստերներ, որոնք ունեն 2800-ից բարձր վարկանիշ:

## Ամիրաղյան-Իսաեւա զույգը մտավ կիսաեզրափակիչ



Երեկ Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժ էլ Շեյխ քաղաքում ավարտվեց թենիսի $10 հազար ընդհանուր մրցանակային ֆոնդ ունեցող կանանց միջազգային մրցաշարի հերթական մրցափուլը զուգախաղերում: Հայաստանի չեմպիոնուհի եւ թիվ մեկ ռակետ Անի Ամիրաղյանը, որ նախորդ օրը մենախաղերի մեկնարկային հանդիպումից դուրս էր մնացել պայքարից, զուգախաղերում ընկերակցելով ռուսաստանցի Դիանա Իսաեւային, երեկ երկրորդ անգամ հասավ հաջողության՝ 6:4, 1:6 (10:6) հաշվով պարտության մատնելով Չան-Կամաշ երկյակին:

Այս հաղթանակով Ամիրաղյանը զուգընկերուհու հետ մտավ կիսաեզրափակիչ:

## Էլի մեկ զոհ ֆուտբոլում

Պրահայի «Սպարտա» ֆուտբոլային ակումբի փոխնախագահ Լուկաշ Պրիբիլի դին հայտնաբերվել է թիմի «Ժեներալի Արենա» ստադիոնի տարածքում գտնվող իր աշխատասենյակում:

Նրա գլխի հատվածում վնասվածք է եղել, իսկ պարանոցին՝ կապտուկներ: Ոստիկանությունն առայժմ չի պնդում, թե 33-ամյա ֆուտբոլային պաշտոնյային սպանել են: «Այս տարբերակը մենք հաստատել կամ ժխտել կարող ենք միայն դիահերձումից հետո», հայտարարել է Պրահայի ոստիկանության մամուլի քարտուղար Տոմաշ Հուլանը:

Նախկին լրագրող Լուկաշ Պրիբիլը սկզբում «Սպարտայում» աշխատել է որպես մամուլի քարտուղար: Այնուհետեւ ղեկավար պաշտոն է զբաղեցրել «Բոհեմիանս» ակումբում: Իսկ անցած տարվա նոյեմբերին վերադարձել է «Սպարտա» որպես ակումբի նախագահ Դանիել Կրետինսկու տեղակալ:

## Դարպասապահները սիրեցին միմյանց

Երբ ռումինացի դարպասապահ Կոստել Պանտիլիմոնն անռանը տեղափոխվում էր «Մանչեսթեր Սիթի», չէր մտածում Ռոբերտո Մանչինիի թիմում առաջին համարը լինելու մասին, քանի որ այդ դիրքում Ջո Հարթին նեղելը շատ դժվար է:



Սակայն խաղային պրակտիկայի պակասը Կոստելին այլ՝ ոչ պակաս հետաքրքիր զբաղմունքներ գտնելու, մասնավորապես, տեղի գեղեցկուհիների հետ ժամանակ անցկացնելու հնարավորություն էր ընձեռում: Ու բոլորի համար անհասկանալի, ստացվեց այնպես, որ ռումինացու երկրպագուն դարձավ «Սիթիի» ամենասեքսուալ երկրպագուն՝ շոտլանդացի մոդել Նաթալի Պեյջը (նկարում), որն աշխատում է Man City TV-ում եւ ինքն էլ ֆուտբոլ է խաղում կրկին դարպասապահի դիրքում:

Երիտասարդ զույգի սիրային հարաբերությունները շարունակվում են արդեն մի քանի ամիս: Այնպես որ, արդեն կարող են միասին ապրել, մանավանդ, որ անգլիական ակումբը Պանտիլիմոնի հետ մինչեւ 2016 թվականը պայմանագիր է կնքել:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

## ԺԱՄԱՆՑ

# Վտանգավոր երազանքներից մինչեւ վճարովի սեքս

Յուրաքանչյուրի մոտ էլ կյանքի որեւէ հատվածում ունեցած երազանքներին գումարվում է այնպիսի մեկը, որը վերաբերում է սեռական կյանքին. սեռական ֆանտազիաներ ունենում են բոլորը, բայց ոչ բոլորն են հնարավորություն ունենում հասնել իրենց ուզած, երազած սեքսին: Հատկապես տղամարդկանց մոտ երբեմն առաջանում է սեռական մտերմության այնպիսի ձեւերի ցանկություն, որոնց մասին նրանք տարիներ շարունակ գաղտնի երազել են: Եվ հաճախ սեքսուալ երազանքներն իրականացվում են մարմնավաճառների օգնությամբ, ու երբ հնարավորություն է ընձեռվում իրականացնելու սեքսուալ ցանկությունները, մոռացվում է անվտանգ սեքսը:

Մարմնավաճառների միջոցով երազանքների իրականացման ու «վրիպելու» դեպքում էլ վերջիններին մեղադրելու մասին «Առավոտը» զրուցեց հոգեբան Ստեփան Ավետիսյանի հետ:



«Մարդկաց մոտ սխալ ավանդույթ է ձեւավորվել՝ կապված փողի, առեւտրի, իսկ ավելի կոնկրետ՝ վճարովի սեքսի հետ: Ամենավտանգավոր, ամենաագրեսիվ, ամենաբաղձալի ու ամենազզվելի սեռական ցանկությունները իրականացվում են մարմնավաճառների միջոցով, այսինքն՝ տղամարդիկ իրենց թույլ են տալիս այն, ինչ չէին անի սեփական կնոջ հետ: Երբ սեքսը վճարովի է, պատկերը լրիվ փոխվում է, ձեւավորված սխալ կարծիքի համաձայն, փողը փոխհատուցում է այն բոլոր վիճակները, որից, ինչու չէ, նաեւ տուժում է փողի համար ռիսկի դիմած կինը: Ասում եմ ռիսկի դիմած, որովհետեւ տղամարդկանց՝ սեքսի հետ կապված ցանկությունները կարող են անգիտակցական, անտրամաբանական լինել»,- նշեց Ս. Ավետիսյանը, ըստ որի՝ երբ սեքսը վճարովի է՝ մեծանում ու ռիսկային է դառնում սխալվելու հնարավորությունը, ինչի արդյունքում տղամարդիկ ձեռք են բերում բազմաթիվ հիվանդություններ՝ միանշանակ մեղադրելով մարմնավաճառ կնոջը:

Չնայած հիմնականում մարմնավաճառն է որոշում, թե ինչ տեսակ ծառայություններ մատուցի եւ ինչ՝ ոչ, ու հենց ինքն էլ սահմանում է դրանց արժեքը, բայց սեքսուալ ծառայությունների իմաստն այն է, որ «կլիենտը» փողի դիմաց ստանա բավարարվածություն: Ստացվում է, որ գնորդի կարգավիճակում հայտնված «կլիենտը» կարող է մարմնավաճառի հետ վարվել այնպես՝ ինչպես կամենա: «Այո, գնորդի կարգավիճակում հայտնված անձը, եթե մի քիչ էլ ալկոհոլի ազդեցության տակ է, կարող է իրեն շատ բան թույլ տալ, անգամ բռնություն կիրառել, որովհետեւ փող է վճարել, նա առաջնորդվում է հաճախորդը միշտ ճիշտ է սկզբունքով: Բայց անկախ ամեն ինչից՝ վճարել եք մարմնական հաճույքի դիմաց, թե ոչ, պետք է հարգել դիմացինին ու չոտնահարել նրա իրավունքները: Եվ որպես զգուշացում ասեմ՝ ավելորդ չէր լինի հիշել, որ վճարովի սեքսը ոչ միայն իրականացնում է ձեր բաղձալի երազանքը, այլեւ վտանգում առողջությունը»,- հավելեց մասնագետը:

Ե. Հ.

## Հայաստանում չե՞ն լինում պոռնոկայքերի վերաբերյալ ահազանգեր

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ պոռնոգրաֆիկ բովանդակության տեղակայումը հայկական հոսթինգ ծառայություններում համարվում է քրեորեն պատժելի արարք: Եվ նման կայքերի սերվեր հայտնաբերելու դեպքում ոստիկանությունը կարող է կասեցնել այն:

Բոլոր նորմալ երկրներում հատկապես անչափահասներին պոռնոկայքերից հեռու պահելու համար գործում է ֆիլտրացման մեթոդը, ինչն էլ նմանատիպ կայքերը անտեղյակ ու միամիտ օգտագործողների համար դարձնում է անհասանելի:

Հայաստանում ֆիլտրացման մեթոդը դեռ չի աշխատում, պոռնոգրաֆիկ կայքերը բացահայտելու ու ահազանգելու համար իբրեւ թե գործում է 010 29-19-26 թեժ գիծը: Նշված հեռախոսահամարով զանգահարելու դեպքում «բաժանորդի հեռախոսը միացված չէ կայանին» պատասխանն է հնչում:

Կարելի է եզրակացնել, որ կամ պոռնոկայքերի մասին ահազանգողներն են շատացել, ու թեժ գիծը շատ է «թեժացել», կամ նշված հեռախոսահամարը, որի մասին ամիսներ առաջ հայտնել էր «Ինտերնետ հանրություն» հ/կ-ի փոխնախագահ Գրիգոր Սաղյանը՝ ոչ ոքի պետք չի եկել:

Ե. ՀԱԿՈԲՅԱՆ